

ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ  
ԱՇԽԱՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱԼԵՊԻ ՀԱՅՈՑ  
ԳԵՂԱՐՎԵՍԸ



ԵՐԵՎԱՆ 1997

ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ (ծնվ. Խրիլիսիում): ՀՀ  
ԳԱԱ Արվեստի ինստիտուտի առաջատար  
գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, ՀՀ  
արվեստի պահպանության առօնից: Զբաղվում է  
քրիստոն  
արվեստ  
արվեստ

ՀՀ  
Դ-15 | Պաշտպան շր 2960  
Արվեստագիտ Շ.  
Կովկասի հայոց  
Գևորգ Վազգունիան. Եր. 1997 թ.

ԳԱԱ  
քար  
թեկ  
հար  
արհ  
հետ

7/63  
2-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒ

## ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ ԱՇԽԱՏ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱԼԵՊԻ ՀԱՅՈՑ  
ԳԵՂԱՐՎԵԱԾԸ



Մեկենասությամբ  
Արմեն և Բերսաբէ ճերենեան Հիմնադրամի  
ԱՄՆ

This Publication was made possible by  
Armen and Bersabe Jerejian Foundation Inc.


USA

Խմբագիր. Պատմական զիտությունների դոկտոր,  
ալլոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն  
ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

NATIONAL ACADEMY OF SCIENCES REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

MANIA GHAZARIAN  
ASHOT STEPANIAN

THE ARMENIAN FINE ARTS  
OF ALEPPO



YEREVAN 1997

AMERICAN ARTS  
OF THE

DIA  
MUSEUM

{

MAY 1909

Հայ ժողովրդի պատմության զգալի մասը՝ զաղբականության պատմությունն է: Թշնամիները եկել են, տիրել են, կռտորել, գերեվարել են, քանդել ու կողոպտել են...: Լավագույն դեպքում, բնիկ հայ ժողովրդը բռնել է զաղբի ճամփան: Դարեր շարունակ հայերը զաղբել են Եգիպտոս, Գալիցիա, Լեհաստան, Ռուսաստան, Իտալիա, Հնդկաստան, Սիրիա, Լիբանան, ապա և ԱՄՆ, Կանադա և այլուր: Հայերը բնակությունն են հաստատել այդ երկրներում և իրենց աշխատասիրությամբ, ստեղծագործական մտքի շնորհիվ ձեռք են բերել տվյալ երկրի բնիկների հարգանքն ու համակրանքը: 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում տեղի ունեցավ հայոց մի նոր տեղահանություն, որի հետևանքով ստեղծվեցին նոր զաղբավայրեր: Առաջին համաշխարհային պատերազմից և 1915թ. Մեծ եղեռնից հետո առաջացած զաղբականությունը դեռևս պահպանում էր իր ազգային հետաքրքրությունները, ճգտում էր հավատարիմ մնալ իր լեզվին, կրոնին և մշակույթին: Մրանցով է օտար ափերում հայը միշտ հայ մնացել: Այս առումով հնագույն զաղբավայրերից է Սիրիան:

Անհիշելի ժամանակներից քաղաքական ու մշակութային առնչություններ կային Հայաստանի և Ասորիքի միջև: Վաղ միջնադարում Ասորիքում կրթություն էին ստանում հայ շնորհավի երիտասարդները (օր. Մեսրոպ Մաշտոցը): 7-րդ դարի սկզբներից հայերը Սիրիայում հիմնական բնակություն են հաստատել, մասնակից լինելով արաբական խալիֆաթների բոլոր հարստությունների քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքին:

Հայ-արաբական հարաբերությունները 20-րդ դարում եղել են հայ և արաբ գիտնականների ուշադրության կենտրոնում: Պատմա-քաղաքական, հասարակական և գրական երևույթներին բազմաբնույթ ուսումնասիրությունն

Են նվիրել մի շաբ անվանի մասնագետներ, որոնց թվում  
նշանակալից են Հր.Աճառյանի, Հ.Նալբանդյանի, Ա.Տեր-  
Ղևոնյանի, Ե.Նաջարյանի, Օ.Թոփուզյանի,  
Ն.Հովհաննիսյանի, Պ.Սարաջյանի, Մուսա Պրենսի, Ֆայեղ  
ալ-Ղոսեյնու, Մրգան ալ-Մուղավարու, Նահմ ալ-Յաֆիի,  
Սամիր Արքայի, Զահր աղ-Դինի, Նիզար Խալիխ, Միշել  
Սովեյմանի և այլոց աշխատությունները: Այդ ուղղությամբ  
մեծ աշխատանք է տարվում հատկապես Հայայատանի  
Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի  
Արևելագիտության ինստիտուտի արարական բաժնում (ղեկ.  
ինստիտուտի տնօրեն պ.գ.դ. Ն.Հովհաննիսյան): Օգտվելով  
թվարկած գիտնականների և այլ բնույթի  
աշխատություններից, ինչպես նաև վերոհիշյալ ինստիտուտի  
կողմից կատարված հայ-արարական առնչություններին  
նվիրված գիտական հետազոտություններից, հնարավոր  
դարձավ ուսումնասիրել նաև Հայեպի հայ արվեստը:

Դրան մեծապես նպաստել է նաև հեղինակներից մեկի  
կատարած հետազոտությունները տեղում Հայեպում: Բերիո  
թեմի առաջնորդարանի հրավերով, լինելով Հայեպում և  
կազմելով «Զարեհյան գանձատան», սր. Քառասուն  
մանկունք եկեղեցու հավաքածուների կատալոգը, ինչպես  
նաև ծանրությունը մելքիթ եկեղեցիների գեղանկարչական  
աշխատանքներին, նպաստավոր պայմաններ հանդիսացան  
ներկա ուսումնասիրության ստեղծման համար:

Արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում նաև  
Սիրիայի հայոց գաղթավայրի մշակույթի հավաքական  
պատմությունը, որը, ցավոք դուրս է մնացել հետազոտողների  
ուշադրությունից: Այնինչ, դա մշակույթի մի շերտ է, որտեղ  
արտակարգ շեշտադրումով երևան են գալիս ոչ միայն հայ  
արվեստի ազգային առանձնահատկությունները, այլև նրա  
արևելականացման միտումները, ինչպես նաև հայ և  
արարական մշակույթների առնչություններն ու մերձեցումը:

Սեր այս համեստ ուսումնասիրությունը նվիրված է

հենց այդ առանձնահատկությունների լուսաբանմանը, որտեղ բացառիկ շեշտադրումներով հանդես են գալիս հալեպահայ զաղբավայրում:

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՎԻՆԵՐՈՒՄ

Հալեպը (Բեռոյա, Ալեպպո), Արևելքի հնագույն քաղաքներից մեկը, վաղնջական ժամանակներից կապված է հայոց պատմությանը: Նրա հիմնադրումը հասնում է Ք.օ.ա. երկրորդ հազարամյակին: Հալեպը բազմաթիվ հնագույն բազավորությունների ու կայսրությունների ժամանակակիցն է: Հերիարային այս քաղաքում հայերը երևացել են դեռևս Տիգրան Բ Մեծի ժամանակ (մ.թ.ա.95-մ.թ.ա.55): Ըստ ավանդության, Հալեպի միջնաբերդի մուտքերից մեկի (դրանք չորսն են) զարդաքանդակները պատրաստվել են հայոց բազավորի կարգադրությամբ, երբ նա գրավել էր Անտիոքը (մ.թ.ա.83-69) և այցելել Հալեպ: Հալեպի քաղաքային կերպարում զգալի տեղ են գրավում մզկիրները, մեղրեսնեները, խաները (իջևանատները):

Հալեպում հայերի առաջին խմբերը հաստատվել են ԺԱ դարում, իսկ որպես զաղբավայր այն ձևավորվեց ԺԴ դարի սկզբին, երբ այնտեղ զաղբեց արդեն անկում ապրող Կիլիկիայի հայոց բազավորության բնակիչների մի մասը: Հետագայում Հալեպ էին գալիս բուրքական բռնապետությունից փախչող արարկիրցիները (1660), սասունցիները (ԺԷ դ.) հռոմելայացիները (ԺԷ դ.), կարինցիները (1737): ԺԷ դարում Հալեպ եկան նաև Զեյքունից, Մարաշից, Մուշից, Նոր Ջուղայից, իսկ դարի երկրորդ կեսին՝ Մաշկերից, Ծագերից: Հալեպի մեծահարուստ երկու քաղերում էին բնակվում

զուղայեցիները, երևանցիներն ու արարկիրցիները: Հալեպսիայ գաղթավայրը ծևավորվում և կազմավորվում էր որպես ազգագրական բազմաթիւյթ շերտավորում ունեցող հասարակություն, որ ապրում էր միայն իրեն հատուկ եկեղեցական, մշակութային կյանքով:

Դեռևս վաղ միջնադարում, սուրբ վայրեր գնացող հայերն անցնում էին Հալեպով: 1624թ. ծանեցի խոչա Ղարիբջանը հայ ուստավորների համար հասուկ կառուցեց մինչև մեր օրերն իր գոյությունը պահպանած նշանավոր Հոգետունը, որտեղ քազմաթիվ նվիրատվական արձանագրություններ են պահպանվել: Հոգետունը Թիլեր և Սալերի թաղերի հատման տեղում էր: Այն ուներ 430մ<sup>2</sup> տարածություն, որն ընդգրկում էր փողոցի երկու կողմերում շարված երկիարկ շենքերի 23 սենյակները: Հոգետունը ուներ երկու դուռ, ջրհոր ու փուռ: Այժմ այդտեղ բանուկ շուկա է: Կիլիկիայից գաղթած հայերը 1429թ. առաջ կառուցեցին սր. Աստվածածին եկեղեցին: Այդ ժամանակ Հալեպն արդեն ծևավորված հայոց գաղթավայր էր հոգևորական դասով, իր թեմով, առաջնորդ եպիսկոպոսներով, ինչպես նաև առևտրականներով ու արհեստավորներով: 1500թ. առաջ Ռայիս Եսային կառուցում է ժամատունը, հոգևորականների խցերը, առանձնացնում է հայկական գերեզմանատունը: Հալեպում էին հիմնավորվել նաև Պետիկ ու Սանոս Չելեպիների մեծահարուստ ազնվական տոհմի գերդաստանները: Պետիկ Չելեպին համայն Սիրիայի, ապա և Կարինի մաքսային գործի ղեկավարներից էր, Հալեպի քաղաքապետը, Հոլանդիայի թագուհու առևտրական ներկայացուցիչը Սիրիայում: Սանոս Չելեպին Կարինի մաքսատան տեսուչն էր և քաղաքագլուխը, արքունի փողերանոցի ղեկավարը: Եղբայրները բազմաթիվ ավետարաններ են գրել տվել, եկեղեցիներին նվիրաբերել են ծիսական բազմաթիվ ոսկերչական իրեր: Ըստ ավանդության 1615թ. Հալեպ եկած Սուլթան Մուրադ Դ-ն հյուրասիրվում է Պետիկ Չելեպիի տանը:<sup>1</sup> Սպասքը չինական

ջնարակված խեցեղեն էր: Հյուրասիրությունից հետո Պետիկ Զելեպին ջարդել է տալիս ողջ սպասքը, պատճառաբանելով, թե սութքանից հետո այդ սպասքից օգտվելու ոչ ոք արժանի չէ: Սակայն այսպիսի կոչումները, հարգանքը և նվիրվածությունը չեն խանգարում, որպեսի հետազայտմ դավադրության հետևանքով Սանոսին զիսատեն Հալեպի միջնարերդում: 1616թ. Պետիկ ու Սանոս Զելեպիները վերանորոգում են հայոց հին մատուքը և հարակից շենքերը, ընդլայնում են հողային տարածքները և ընդհանուր հորինվածքում ներգրավում սր. Քառասուն՝ մանկունք եկեղեցին: <sup>2</sup> Վերջինս հարթ կտուրով է, սյունազարդ, կամարակապ: Ունի երեք խորան՝ սր. Աստվածածնի, սր. Գրիգոր Լուսավորչի և Սրբոց Որոտնանց անուններով: 1888թ. կառուցվել է եկեղեցու Սկրտարանը, իսկ 1911-ին՝ Զանգակատունը (բրազիլաքնակ, անցյալում հալեպահայ Զորյ Թահանի ծախսը), որը Սան Պաուլոյի սեփական ծուլարանում պատրաստեց նաև եկեղեցու զանգերը):

Սր. Քառասուն մանկունք եկեղեցում քաղված են կարողիկոսներ Ազարիա Զուղայեցին (1601), Պետրոս Կարկառեցին (1608), ինչպես նաև հետագա կարողիկոսները: Ռայիս Եսային վերանորոգել է նաև սր. Քառասուն մանկունք եկեղեցուն կից գտնվող մելքիթների սր. Եղիա և հոյների սր. Գևորգ եկեղեցիները, պատվիրելով նրանց խաչկալները:

Ժ՞ դարի վերջում - Ժ՞ գ. սկզբին Հալեպի սր. Քառասուն մանկունք եկեղեցուն կից ստեղծվում է դասատուն (1860-ից՝ վարժարան), որը ոչ միայն հոգևոր հաստատություն էր, այլև գիտության ու մշակույթի կենտրոն: Այդտեղ գրվել ու նկարագրդվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնցից հնագույնը 1355թ. «Ավետարանն» է (այժմ՝ Երուսաղեմի սր. Հակոբյանց վանքի ձեռագրատուն): Հետագայում դասատանը աշխատել են այնպիսի տաղանդավոր գրիչներ ու մանրանկարիչներ, ինչպիսիք են Մելիքսեր Վարսահապետը, Ստեփանոս քին. Կրակցին, գրիչ ու ծաղկող Հովհաննես Ղալամբարյան Հալեպցին: Այսեղ մեծ հոգատարությամբ

արտագրվել են աստվածաշնչեր, ավետարաններ, ներբողներ, խրատներ, ճառեր, Պղոկի և Ուկեբերանի աշխատությունները: ԺԵ դարում գործը հովանավորում էր Կիլիկիայից գաղթած վաճառական Ֆարուճը: Դասատանը կից կազմարարական արվեստանոցում աշխատել են գործի վարպետներ Հովհաննեար (1553), Միքայել արեղան (1609), Պաղտասար քահանան (1612), Պետրոս Հալեպցին (1691), Եսայի ասրկավագը (1783) և այլք: Զեռագրերի կազմերը կաշեպատ էին կամ արծաթապատ: Կազմատանը պատրաստած ընտիք գործերից մեզ է հասել «Հալեպի ավետարանը» արծաթյա պահպանակով (Հալեպ, Առաջնորդարան): Ավետարանը գրվել է 1580թ., իսկ դրվագված կազմի հեղինակը լուսարար Տեր-Միքայելն է: Գրիչներն ու ծաղկողները Հալեպ էին հրավիրվում նաև ձեռագրային այլ կենտրոններից: ԺԵ դարում Հալեպում աշխատել են Խորայել Ամբեցին՝ Տիգրանակերտից, Սկրտիչն ու Վարդանը՝ Լեհաստանից, Ավետիքը՝ Ամիղից, Ղազար Դպիրը՝ Զեյրունից, Աստվածատուր քահանան և նրա աշակերտ Ալեքսիանոսը՝ Ուռիայից, գրիչներ Մարկարը՝ Կարինից, Պետրոս քահանա Աստապատցին՝ Էջմիածնից, Ներսես Վարդապետը՝ Սերաստիայից, Ղազար Բարերդցին և ուրիշներ: Հալեպում ապրել ու ստեղծագործել են նաև ձեռագիր ծաղկող, կապող և կազմող Տեր Ղազարն իր որդիների հետ, երաժիշտ Խաչատուր Վարդապետ Կարկառեցին, Վասիլ Վարդապետը և գիտական ուսումնասիրությունների հեղինակ Սարգիս քահանա Խիզանցին, որը 1596թ. Հալեպ է հրավիրվում որպես «արուեստի ուսուցող»: Հալեպի մեծահարուստները ձեռագրեր էին պատվիրում նաև օտար արվեստանոցներում (Մարաշ և Զեյրուն) ստեղծագործող գրիչներին ու մանրանկարիչներին:

Հայերը տիրապետում էին արարերենին, քուրքերենին, պարսկերենին, իսկ երեմն գիտեին նաև ֆրանսերեն ու իտալերեն: Աշխատում էին որպես քարգմանիչ: Գիտական

ու մշակութային այսօրինակ մքնոլորտը հրապուրում և Հալեպ էր բերում աշխարհի տարրեր ծայրերում ապրող հայ մտավորականներին: Տարբեր ժամանակ Հալեպ են եկել ժամանակագիր Գրիգոր Դարանաղցին (մոտ 1576-1643), ճանապարհորդ-ուղեգորդ, հասարակական և եկեղեցական գործիչ Սիմեոն Լեհացին (1584-1637), պատմագիր Առաքել Դավիթեցին (?-1670), ապագա եկեղեցական գործիչ և գիտնական Մխիթար Սերաստացին (1676-1749), հայ ազատագրական շարժման առաջատար դեմքերից մեկը՝ Հովսեփ Էմինը (1726-1809), աստվածաբան, քերական և պատմագիր Միքայել Չամչյանը (1738-1823), անվանի աշուղ և բանաստեղծ Սայաթ-Նովան (1712-1795) և շատ ու շատ ուրիշներ: Հալեպի հայ գաղթավայրի զարգացմանը նպաստել են բազմաթիվ հոգևոր գործիչներ - թեմի առաջնորդներ. Տեր-Խաչատուր արքեպիսկոպոսը (1525-1545), Տեր-Հովհաննես Ուռհայեցին (1535-1603), Սիմեոն Սերաստացին (1625-1633) և այլք: Սրանց շարքում որպես խոշոր մտավորական առանձնանում է բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանը:

Հալեպի առաջնորդարանը Բերիո թեմի վարչատնտեսական կենտրոնն է, որտեղ երրեսն գահակալել են նաև Սեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսները և այստեղ, նույնիսկ մեկ անգամ, մեռոն է եփվել (1849):

Հալեպահայերը զբաղվում են առևտրով, պաշտոնավորվում են պետական հիմնարկներում, իջևանատներում և ամենակարենքը - հմուտ արհեստավորներ են (ոսկերիչներ, մետականագործներ, հյուսվածքագործներ, որն ինչպես կանաց, նույնպես և տղամարդկանց մասնագիտությունն էր): Ներկարարությունը մարաշցինների ու այնթապցինների մենաշնորհն էր, որոնք նաև կտավագործներ են: Կաշվի մշակման և կոշկակարության մեջ մասնագիտացել են տիգրանակերտցինները: Նրանք մշակում են ուղտի, ոչխարի և այծի կաշին (սեկ),

պատրատում էին կարմիր ու դեղին ներկված կիսակոշիկներ, երբեմն՝ արծաթյա հավելումներով: Արհեստավորների քանակը համալրվեց 1915թ. Մեծ Եղեռնից հետո: Պատճական Հայաստանի զավառներից, ինչպես նաև Թուրքիայի հայարնակ քաղաքներից ու գյուղերից դեպի Սիրիայի անապատները տարված հազարավոր հայերի մի մասը զոհվեց Եփրատի ափի ավազուտներում, իսկ «Փրկվածները»՝ Տեր Չորի քարանձավներում: Հայ մտավորականներին փրկելու և ապաստան տալու գործում անգնահատելի է Գրիգոր աղա Մազլումյանի (1876-1962) դերը, որը Հալեպում հիմնադրել էր առաջին Եվրոպականատիպ «Բարոն» հյուրանոցը: Այստեղ իջևանում էին ինչպես թուրք մեծամեծները, նույնպես և օտարերկրյա հյուպատոսներն ու ճանապարհորդները: Հյուրանոցում, Ենվեր փաշայի բնակւթյան օրերին Մազլումյանները պատսպարել են Գրիգոր Չոհրապին և Երվանդ Օսյանին: Հյուրանոցի դեկանարման գործը մեր օրերում շարունակեցին նրա որդի Արմենը, ապա և թոռը՝ Գրիգորը (մահ. 1993):

Նշանակալից էր նաև միսիոներների օժանդակությունը հայ որբերին ու զաղքականներին: Հալեպում արտակարգ սիրով է հիշվում դանիուիի Կարեն Եփփեի անունը, որն իր կյանքի հիսուն տարիներից երեսունչորսը նվիրաբերեց հայ վշտացյալներին: Ըստ Կարեն Եփփեի ցանկության, նրան թաղեցին հայկական լուսավորչական ծեսով (1935թ., հուլիսի 9):

1915թ. Եղեռնից փրկված հայերի հոծ մի քազմություն հիմնավորվեց Հալեպում կամ հարակից ավաններում: Հալեպ եկած հայ զաղքականները ստեղծեցին առանձին թաղեր. Մեյդան, Համիդիե, Սերիլ, Հարք Պլդար, Հարք Մահիպ: Հալեպիները կառուցեցին Եկեղեցիներ. (սր. Լուսավորիչ, սր. Խաչ, սր. Հակոբ, սր. Աստվածածին), դպրոցներ, հիմնադրեցին քարեգործական ընկերություններ: Նրանք իրենց աշխատանքով, իրենց ստեղծագործ մտքով, կյանքը

նորովի հաստատելու ձգտումով, նոր շունչ տվեցին հալեպահայ գաղթավայրին:

Այօրվա Հալեպն ունի մեծ հեղինակություն վայելող Առաջնորդարան (առաջնորդը՝ Սուրեն արք. Գաթարոյան): Առաջնորդարանը ղեկավարում է համայնքի կրտսեական և աշխարհիկ հարցերը, հրատարակում է «Գանձասար» հայերեն միակ պարբերական ամսագիրը: Հալեպն ունի մի քանի վարժարան (Կարեն Եփեն, Կիլիկյան, Մխիթարյան միաբանության և այլն), դպրոցներ, Հայոց բարեգործական ընդհանուր միության մշակութային - ընկերության կենտրոններ, մի շարք հասարակական միություններ, «Սարյան ակադեմիան» (հիմնադիր՝ ակնարույժ, հասարակական գործիչ Ռոբեր Շեպեճյան) և «Արշիլ Գորկի ակադեմի» նկարչական դպրոցները, որտեղ կազմակերպվում են ցուցահանդեսներ: 1920-ական թվականների վերջերից Հալեպ հյուրախաների են զայս բատերական և երաժշտական խմբեր: Հալեպն ունի գաղթավայրի ակտիվ կյանքով ապրող մտավորականներ, բժիշկներ, ուսուցիչներ, փաստաբաններ, գրողներ, ճարտարապետներ, երաժշտագետներ, նկարիչներ: Վերջիններից մի քանիսը ավարտել են Երևանի գեղարվեստա-քատերական ինստիտուտը: Գաղթավայրն ունի հասարակական-մշակութային երեք սրահ: Հալեպի ազգային գերեզմանատանն են գտնվում Խոջա Պետիկ Չելեպու, Կարեն Եփենի, Հակոբ Օշտականի շիրիմները:

Հալեպի հայ մշակույթից աննշան մասն է պահպանվել սր. Աստվածածնի, սր. Քառասուն մանկունք և «Զարեհյան գանձատան»<sup>3</sup> ավանդատներում և պահոցներում: Պահպանված իրերի մի մասը կորցրել է իր վաղենի հմայքը:

Գանձատան և սր. Քառասուն մանկունք եկեղեցու հարդարանքում տեղ գտած արվեստի գործերի հիման վրա հնարավոր է դառնում հետևել կիրառական արվեստի տարբեր ուղղությունների և եկեղեցական նկարչության զարգացմանը, հասարակության կողմից այդ

բնագավառների նկատմամբ ունեցած հետաքրքրությանը, ինչպես նաև զատորոշել Հալեպի հայ արվեստի առանձահատկությունները: Հնարավոր է դառնում նաև շրջանառության մեջ դնել հայ արվեստագետ-արհեստավորների նոր անուններ: Բացի տեղական դպրոցից, հետաքրքրություն ուներ նաև դեպի Պատմական Հայաստանի նմանատիպ արհեստավորական կենտրոնների ստեղծագործությունները, որոնք նպաստում էին ազգային մշակույթի ավանդների պահպանմանը:



## ՈՍԿԵՐՉՈՒԹՅՈՒՆ

Ոսկերչությունը Հալեպում ամենատարածված արհեստն էր: Բնական է, որ այս անվան տակ հասկանում ենք նաև արծարագործությունը: Հալեպում հայ ոսկերիչներին եկեղեցական սպասքներ էին պատվիրում տեղի բնակիչները: Օր. Պետիկ ու Սանս եղբայրները, կառուցելով սր. Քառասուն մասնկունք եկեղեցին, այն զարդարեցին ծիսական սպասքներով, անոքներով և մագաղաքյա ձեռագրերով: Նույնը նրանք արել են նաև Երուսաղեմի համար, նվիրաբերելով շուրջառներ և արծարե զավագան: 1882թ. սր. Աստվածածին եկեղեցու ավագ խորանին զոգնոց են նվիրում ռուշճասցի և աղանացի հալեպարնակ առևտրականները: Դրան զուգահեռ ոսկերչական ծիսական իրեր Հալեպ էին հասնում տարրեր ճանապարհներով.

ա) Երուսաղեմ գնացող կամ Հալեպով նորից ետ եկող ուխտավորների միջոցով:

բ) Նշանավոր Արքունական ճանապարհով Հնդկաստանից, Նոր Ջուղայից, Նախիջևանից, Երևանից, Փոքր Ասիայի հայաբնակ կամ հայաշատ քաղաքներից

Հալեպ էին գալիս հայ վաճառականները: Նրանք իրենց հետ բերում էին զեղարվեստական բարձրարժեք ծխական իրեր ու նվիրաբերում տեղի եկեղեցիներին:

զ) Ծխական իրեր էին պատվիրում թերիո թեմի առաջնորդներն ու կրոնավորները, որոնք նաև արվեստի արժեքներ էին բերում, որպես նվիրակ, թեմապատկան վայրերից: Օր. Սիմեոն արքեպիսկոպոսը Հալեպի երկու եկեղեցիները զարդարում է կանքեղներով, իսկ խորանների աստիճանները՝ հրեշտակների արծաթյա պատկերումներով: 1634թ. Տեր Հակոբ բարունապետին ասեղնագործ շրեղ եմրփորոն են նվիրում Հալեպում: 1669թ. տիրացու Սկոն արծաթյա խաչ է նվիրաբերել, իսկ 1809թ. արծաթյա սկիհ՝ ուռհայեցի տիրացու Սիմոնը:

Այնքան տպավորիչ է եղել սր. Քառասուն մանկունք եկեղեցու զգեստներից, զարդերից ու ծխական այլ իրերից ստացած տպավորությունը, որ Ֆրանսիայի հյուպատոսը 1680թ. սեպտեմբերի 20-ին, ներկա լինելով պատարագին, հիշատակում է. «Ոսկեհյուս և արծաթահյուս ասեղնագործված փայլուն շուրջառը», «քանկագին խույրը», «սեղանի առջև կախված Հիսուսի ծնունդը ներկայացնող ասեղնագործ գոգնոցը», «քահանայական շատ ճոխ զլյանցները կամ թագերը, վերևում կախված քանի շափ կանքեղները»: Ըստ այդ նույն հուշագրության, քահանան զլյան ուներ «ճոխ սաղավարտ», «շուրջառի տակից հագած էր շատ նուրբ գործված պարեգոտ, իսկ գոտին ծածկված էր ոսկեհյուս կարմրագույն թլաքներով», «փորուրարը մետաքսահյուս կերպասի կտորից էր», «եկեղեցում կային գեղեցիկ ու շատ շքեղ ծածկոցներ, սկիհներ և այլն»:

Այսօրինակ նվիրատվությունները շարունակվում են նաև մեր օրերում: Կեսարիայում պատրաստված ընտիր արծաթ-ոսկեզօծ գոտի է նվիրաբերել Սուրեն արք. Գաբրիալյանը:

դ) Ամենակարևորը 1915թ. Մեծ եղեռնի հետևանքով արաբական աշխարհի և, հատկապես Սիրիա վերաբնակված

հայ գաղթականները, մեծագույն գոհողությունների գնով Հալեպ հասցրին իրենց եկեղեցիների ու տների մշակութային արժեք ներկայացնող իրերը: Ժամանակի ընթացքում դրանց մի մասը զոհ է գնացել իրդեհներին, իսկ տուրքերը վճարելու համար վաճառել են զարդեր ու սպասքներ, նույնիսկ նկարների վրայի արծաթյա հավելումները:

Ինչպես յուրաքանչյուր հայկական արիեստավորական կենտրոն, Հալեպում նույնպես հայերը գրադարձում էին պղնձագործությամբ, որոնցով ապահովում էին կենցաղային բազմաթիվ պահանջներ: Հալեպը միակ գաղթավայրն է, որտեղ պահպանվել են Կ.Պոլսի նշանավոր ծնծղագործներ Զիլճյանների աշխատանքները:

Զիլճյանների (թր. զիլ - ծնծղա) ընտանիքը գործը ձեռնարկել էր ԺԵ-ԺԶ դարերում: 1623թ. Ավետիս Զիլճյանը անազի ու պղնձի սեփական համաձուլվածքով պատրաստեց արտակարգ հնչողության ծնծղաններ, որոնք գերազանցում էին եվրոպական օրինակներին: Հատկապես նշանակալից էին Քերովքե Զիլճյանի (1838-1910) պատրաստածները, որոնք միջազգային ցուցահանդեսներում բազմիցս մրցանակների են արժանացել:<sup>4</sup>

Արծարի համեմատարար մատչելի լինելը, նրա փափկությունն ու ճկունությունը, մշակման բազմազան եղանակները, մետաղի մոխրագույնը ու նրբությունը, կանխորոշել են նրա լայն տարածումը կենցաղում, ինչպես նաև կայուն տեղ՝ ոսկերչական արվեստում: Հալեպում նշանավոր ոսկերիչ էր ուրֆայեցի մահտեսի Մկրտիչը:

Հալեպահայ վարպետների կողմից ստեղծվող արժեքների մեջ կարևորագույն տեղ էին զրավում խաչերը (ճաճանչախաղ, ձեռաց, կրծքի), որոնք պատրաստվում էին ձուլման, դրվագման, զուգարելի (ֆիլիզրան) ամենանորը տեխնիկայով և բարդ հորինվածքներով: Տարբեր վայրերից բերված բարձրարվեստ խաչերից են Այնքապի սր. Աստվածածին եկեղեցուց բերված Սեղանի զույգ խաչերը (1832-1833), Նոր Զուղայից բերվածը (1663), Զեյթունի խաչը

(1770), 17-19-րդ դարերում պատրաստված ձեռաց և սեղանի խաչերը, որոնց զգալի մասը դրվագման եղանակով է արված: Սա ազգային և կրոնական առանձնահատկությունների պահպանման կարևոր հաստատում է: Յուրաքանչյուր տաճար, եկեղեցի կամ բանգարան հպարտանում է նաև իր մասունքներով: Հալեպի Քառասուն մանկունք եկեղեցում պահպանվել են սր. Կենաց փայտի, Նոյան տապանի մասունքներով, սր. Հակոբոս Տեառնեղոր (1660, Կեսարիա), սր. Գևորգ Չորավարի մասունքներով, ինչպես նաև սր. Թեղդորոսի մասունքով սեղանի խաչը: Անշուշտ այն ունեցել է իին նախաօրինակ: Երբեմն խաչի կենտրոնը (բունը) ծածկված էր լինում կլոր ապակիով, որտեղ և տեղադրվում էր մասունքը:

Հայոց եկեղեցու առարկայական սրբությունների մեջ, որպես միակ պահպանված օրինակ, առանձնակի տեղ է գրավում 1701թ. Հալեպում դրվագված Թափորի խաչը: Խաչի մեծությունը (բարձ. 98սմ.) հնարավոր է դարձրել արծաթի տարածքների մեծ հարբությունների առկայություն, որոնց վրա վարպետը տեղադրել է խաչելության հորինվածքը, ավետարանիչներին իրենց խորհրդանիշներով, հրեշտակներով շրջապատված զահակալ Աստվածամորը, Հիսուսի Հարությունը, որոնք առնված են ընտիր ծաղկազարդերի մեջ: Խաչը Հալեպի հայ բնակչության և հոգևորականների պատվերով պատրաստել է մոմճի Կարապետը, որն ինչպես ինքն է գրում «... բազում աշխատանք ունի»: Հալեպի ոսկերիչները պատրաստում էին նաև սլյիհներ, որոնք արվում էին ավանդական ձևերով, սակայն դրանցից մեկը բացառիկ օրինակ է և վկայում է ոսկերիչ-արվեստագետի բարձր մասնագիտացումը (1621թ.): Այն պատվիրել է Խաչատուր արքեպիսկոպոս Կարկառեցին (ԺԷ դարի առաջին տասնամյակների Հալեպի առաջնորդը): Սրան ժամանակակիցը բնութագրում է որպես «քաջ երաժիշտ, քաղցրածայն և համեղաբարբառ»:

Արարական աշխարհը հայտնի է նաև իր արտակարգ,

Արբագեղ կանթեղներով: Սիրիայում կանթեղներ էին պատրաստում երկնագույն ապակուց (Դամասկոսյան արվեստ): Հայ կանթեղագործները տիրապետում էին դրվագման, կտրվածքի այնօրինակ վարպետության, երբ կանթեղի համամասները, ներսում տեղադրված ապակե ճրագի լույսի արտացոլումից, եկեղեցու տարածության մեջ ստեղծում էին կախարդական պատրամբ: Մեզ են հասել տարբեր ժամանակներում պատրաստված մեծ ու փոքր կանթեղներ: Հայ կանթեղագործները, մետաղի մշակման տեղական հնարների օգտագործումը շաղկապում էին տարբեր գավառների ազգային նույնատիպ արվեստին, որն ուներ սեփական առանձնահատկություններ: Լուսավորչի կանթեղի դարավոր ավանդությունը հայկական արհեստավորական բոլոր կենտրոններում ունեցավ նույնանման զարգացում: Դրա վկայություններից է Ուլնիայից (Զեյթուն) Հալեպ տեղափոխված տասնյակ կանթեղներով լցված արկղները (պահպանվում են հայոց Առաջնորդարանում):

Ինչպես բոլոր գրչության կենտրոններում, նույնպես և Հալեպում առանձնակի հոգատարություն կար դեպի ձեռագիրը: Հալեպի Առաջնորդարանի ձեռագրատանը պահպանվել են մի քանի արծաթյա ընտիր պահպանակազմեր: Դրանք ունեն նուրբ մշակում, քանդակի հավելվածներ՝ ձևերի փափուկ անցումներով:

Հալեպի ոսկերչական արվեստի վրա բավականին ակնհայտ է հատկապես Կ.Պոլսի նույնանուն արվեստի ազդեցությունը: Լավագույն ապացույցներից են սր. Քառասուն մանկունք եկեղեցու խորանների գոգնոցները, արծաթյա հավելումներով, պատրաստված Կ.Պոլսում:

Բավական մեծ խումբ են ներկայացնում արծաթագործ վակասները, գոտիներն ու ճարմանդները՝ հատկապես Կիլիկիայում պատրաստվածները: Կիլիկիայի և Արևմտյան Հայաստանի եկեղեցիներում ընդունված են եղել արծաթյա հրեշտակները, որոնք ժառանգաբար

ծիսական են դարձել նաև Հալեպի հայկական նկեղեցիներում: Տոնական օրերին այդ հրեշտակները դրվում էին դեպի Ավագ խորանը տանող երկու կողմերի աստիճանների վրա, ինչպես նաև վարագույրի առջև: Հալեպում պատրաստվածները դեկորատիվ են, կատարված են դրվագումով, կտրվածքով, արտաքինից ուսուցիկ ծավալներով: Երբեմն հրեշտակները զոյզ են, արված հայելու անդրադարձման սկզբունքով: Սրանց մեջտեղում ներկայանում է Կենաց ծառը: Այս օրինակները ԺԸ և ԺԹ դարերի են, տեղական արծաթագործության փայլուն օրինակներ, որոնք հարստացնում են հայկական մետաղամշակման բազմաբնույթ եռթյունը: Ոսկերչությանն ու արծաթագործությանը զուգահեռ, Հալեպում կատարելության էր հասցված նաև ակնագործության արվեստը:

## ԱԿՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հալեպի բազմաթիվ ակնագործները ոչ միայն բավարարում էին տեղի բնակչության պահանջները, այլև կիսամշակ ալմաստը և պատրաստի աղամանդը առաքում եվրոպական երկրներ: Մեզ անհայտ են հայ ակնագործների անունները, բացառություն է կազմում Սարգիս քահանան (աշխարհիկ անունը՝ Մուրատ /1592-1662/): Նա բազմակողմանի զարգացած անձնավորություն էր, որի մասին վկայում է տեր Սարգսի մահվան կապակցությամբ (1662թ., 3.09.) նրա որդիների գրառումը: Երուսաղեմ գնալիս Սարգիս քահանայի հետ ծանոքացել է Առաքել Դավրիժեցին, իիացել նրա բազմակողմանի ընդունակություններով և գիտելիքներով: Ա. Դավրիժեցու խնդրանքով Սարգիս քահանան նրա համար կազմում է

թանկառժեք քարերի վերաբերյալ ընդարձակ մի ցուցակ և նվիրում պատմիչին: Այդ ձեռագիրը «Վասն անուանց եւ որպիսութեանց պատուական ականց» խորագրով Դավիթեցին կցում է 1662թ. ավարտած իր «Պատմությանը», որը լույս տեսավ 1669թ. Ամստերդամում (հետագայում՝ 1873թ. այն ոռուսերենից թարգմանեց Գ.Պատկանյանը և հրատարակեց Ս.Պետերբուրգում, իսկ 1990թ.՝ այն լույս տեսավ նաև Երևանում): Սարգիս քահանան այդ ուսումնասիրության մեջ ոչ միայն թվարկում է թանկառժեք քարերի անունները հայերեն, ֆրանսերեն, արաբերեն, պարսկերեն, բուրբերեն և Ներքայերեն, այլև բնութագրում նրանց ֆիզիկական, բուժական, ինչպես և մոգական հատկությունները, հիշատակում թանկառժեք քարերի նշանավոր հանքատեղերը, նշում նրանց արժեքը և այլն: Աշխատանքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն որոշակի աղերսներ ունի պարսկկ նշանավոր գիտնական-հանրագիտակ Արու Ռեյխան Բիրունո (4.10.973-13.12.1048) աշխատության հետ: Տեր-Սարգիս քահանայի ուսումնասիրությունն է նաև «Ծառգիրք» ձեռագիրը (Մազլումյան ընտանիքի սեփականություն): Ձեռագրի 168 թերթերի վրա գծագրված են աստղաբաշխական մի շարք երևոյթների գրաֆիկական պատկերումները, տրվում են բժշկական խորհուրդներ, գուշակության տախտակներ: 1680թ. ձեռագիրը բնագրից ընդօրինակել է Խաչատուր գրիչը:

Սարգիս քահանայի որդիների գրառման, Ա.Դավիթեցու և մի շարք ձեռագրերի հիշատակարաններում պահպանված տվյալների հիման վրա, գիտնականի սպառիչ կերպարը ներկայացրել է Ա.Սյուրմեյանը. «...հմուտ և տեղյակ բանից գրոց, կարի վարժ ի լեզուն Արապի և օսմանցոց և ֆռանկին արուեստին ակնազործ՝ որ պատահական ականս հայրէ և շինէ և զնող և վաճառող սոցին», «... որ ոչ միայն ծանոթ իին և նոր Կտակարանց և աստուածաբանական ուսմանց, այլև

ծանոթ գրաւոր գիտութեանց, բժշկութեան, տիեզերագրութեան, տոմարագիտութեան, հաշուակալութեան, թանկագին քարերու գիտութեան և վերջապէս ... բժիշկ ալ է միանգամայն ու կարդացած է Ամիրտովվարն ու Սլսիթար Հերացին»: Մուրատ-Սարգիս քահանայի գիտելիքների այս մակարդակը ցուցադրում է Հալեպում ակնագործությանը տրվող արժեքավորումը՝ արհեստավորության մի բնագավառ, որը բարձրացված էր գիտական մակարդակի:

## ԽԵՑԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հալեպի խեցեգործական արվեստի նմուշներից քիչ օրինակներ են մեզ հասել: Դրանք կարելի է բաժանել երեք խմբի. Իզնիկի խեցեգործություն, Ջյորժիայի և տեղական սիրիական խեցեգործություն:

Իզնիկի, Արևելքի խեցեգործության այդ խոշորագույն կենտրոնի ստեղծագործություններն իրենց նրբագույն ձևերով ու հարդարանքով մեծ համարում ունեին ոչ միայն Փոքր Ասիայի տարածքում, այլև եվրոպական երկրներում և արաբական աշխարհում: Իզնիկում մի քանի հայ ընտանիքներ մասնակից էին տեղական խեցեգործության արդյունահանությանը: Նրանք տիրապետում էին կավի մշակմանն ու թրծմանը, հմուտ էին ջնարակի նրբագույն երանգների շնորհիվ իսկական արվեստի գործեր արտադրելու:

Իզնիկի խեցեգործությունը գանձատանը ներկայացված է երկու օրինակով. (ցավոր՝ վճասված), սկիհի կափարիչ և ջրի սափոր: Երկուսն էլ ԺԵ դարի են: Նրբագույն ձևերից, սպիտակ ֆոնի վրա թափանցիկ կապույտ ջնարակի օգտագործումից, գեղեցիկ անցումներից իրեն ստանում են

արտակարգ ազնիվ գեղեցկություն: Իզմիկի խեցեգործական արվեստը ԺԵ դարի վերջին սկսեց անկում ապրել և նրան փոխարինելու եկավ Զյորահիայի արտադրանքը:

Զյորահիան (այժմ Թուրքիայի համանուն վիլայեթի վարչական կենտրոնը) հնուց հայաբնակ քաղաք էր, որտեղ ԺԷ դ. բռնի զաղբեցվեց Գողբն զավառի Յղնա գյուղի և հարակից բնակավայրերի հայ բնակչությունը: Զյորահիայի հայերի զգալի մասը ներգրավված էր խեցեգործական արդյունահանության մեջ: Թուրք ճանապարհորդ Էվլիա Չելեպին (ԺԷ դ.) Զյորահիայում հիշատակում է 15 հայ տուն, որոնք ամրողովին զբաղվում էին այդ գործով: Զյորահիայի խեցեգործները հմուտ բրուտ էին, բրծող ու նկարազարդող: Անիրաժեշտ կավե հումքը բերվում էր քաղաքի մոտ գտնվող հանքավայրից: Այդ հողը հայտնի էր «բաֆ արմանի» (հայկական կավ) անվան տակ: Արդյունահանությանն անիրաժեշտ բորակը Զյորահիա էին բերում հայ վաճառականները, որոնց մենաշնորհն էր այդ գործը, իսկ տեղի արտադրանքը նրանց միջոցով տարածվում էր արևելյան և եվրոպական երկրներ, տեղերում ստանալով «հայկական Սևր» անունը: Զյորահիայի խեցեգործական ընտիր իրեր պահպանվել են Վենետիկի սր. Ղազարի և Վիեննայի Սխիքարյան միարանությունների, Երուսաղեմի սր. Հակոբյանց վանքի, Կ.Պոլսի, Լոնդոնի, Լիսարոնի, Արենքի, Ֆինդինատիի թանգարաններում: Դրանց զգալի մասի վրա արձանագրված են վարպետների անունները կամ անվան կցագրերը: Զյորահիայում պատրաստում էին կենցաղային և ծիսական բազմաթիւյթ իրեր: Մեծ տարածում ունեին նաև այստեղ պատրաստված գնդերը (հավկիթները): Մի փոքր սրածայր, նկարազարդված խաչերով կամ իրեշտակների զլուխներով (դեղին, կանաչ, շագանակագույն, կապույտ), այս զնդերը օգտագործվում էին տաճարների ու եկեղեցիների կանքեղների երկար շղթաների միօրինակությունը խ դիտելու նպատակով և ունեին զուտ գեղագիտական նշանակություն (ԺԷ և ԺՄ դդ.՝

այսպիսի գնդեր պալատների ու ապարանքների ջահերի շղթաների հարդարման համար արտադրում էր նաև ֆրանսիական հախճապակու նշանավոր Սերի ֆարբիկան։ Այս գնդերը նկարազարդել են ժամանակի նշանավոր նկարիչներ Բուշեն, Ֆրագոնարը և այլք)։ Հալեպի Գանձատանը ցուցադրված մի քանի գնդերը լրիվ պատկերացում են տալիս ինչպես արվեստի այս տեսակի, նույնպես և Քյորահիայի խեցեգործության առանձնահատկությունների մասին։

1915թ. Մեծ եղեռնից հետո, Քյորահիայի խեցեգործական ավանդները տեղափոխվեցին Երուսաղեմ, որտեղ Հովհաննիսյան եղբայրների արվեստանոցներում վերջին առկայօնումն ունեցավ այդ գեղեցիկ արվեստը։

Դրանց կողքին նշանակալից էր սիրիական խեցեգործությունը։ Հայ վարպետներն էին եկեղեցական խեցե սալիկներ պատրաստողները։ Ժամանակի լճաքքում դրանց զգալի մասը ոչնչացել է։ Պահպանված նմուշներն ունեն խաչահիմ ծաղկազարդ հորինվածքներ, կապտականաշագույն երանգների գերազանցությամբ, իսկ որոշ քեկորների վրա կապույտի և երկնագույնի շեշտադրումներով հորինվածքներ են։ Զգալի հատված են կազմում քրաշուշանների շքեղ փնջերով հարդարվածները, որոնք ունեն գունային տաք կոլորիտ և գծանկարի հատակ նրբագեղություն։ Բոլոր օրինակների վրա զգալի է Քյորահիայի խեցեգործության ազդեցությունը։ 1681թ. այս սալիկներով են հարդարվել սր. Աստվածածին եկեղեցու մկրտության ավազանը։ Սր. Քառասուն մանկունք եկեղեցու մեծ խորանի կամարի վրա ամրացված սալիկները՝ հրեշտակների ու ավետարանիչների պատկերումներով են։ Այս սալիկների վրա առկա է շինական խեցեգործական արվեստին բնորոշ նախշաձևների մշակման ազդեցությունը, որը խոսում է հայ վարպետների այդօրինակ նախասիրությունների մասին։ Նույնանման սալիկներով հարդարված են եղել Հալեպի մեծահարուստների տները։

Սր. Քառասուն մանկունք եկեղեցու մկրտության իին ավագանի ճակատը զարդարում էր «Մկրտություն» խեցե հորինվածքը, որը ժամանակի ընթացքում փշրվել էր և վերանորոգվեց 1992թ.: «Մկրտություն» աշխատանքի համար խեցեգործ վարպետն օգտագործել է հալեպահայ շնորհաշատ նկարիչ Հաննայի կողմից կատարված գեղանկարչական նախաօրինակը: Չի բացառվում, որ հենց ինքը, Հաննան է կավի Վրա ջնարակով նկարել «Մկրտության» տեսարանը, քանի որ նկարի ցածում, տեղադրված է Հաննա Մուսավերի անունը պարունակող հայերեն արձանագրություն: Պատկերը ցուցադրում է արվեստագետի անհատական ձիրքը, որն ունի ոչ միայն հորինվածքի համամասների միասնականության գգացողություն, այլև կարողանում է գտնել ջնարակի գունային համադրություններ, որոնք այս ստեղծագործությունը բարձրացնում են գեղանկարչական աշխատանքի մակարդակի: Գունային նույն պարզությամբ են բնորոշված նկարի շորս անկյուններում պատկերված ավետարանիչները՝ արտաքին տիպական բնութագրումներով: Նկարի շուրջը տեղադրված հայերեն արձանագրության մեջ ներգրավված են Քրիստոսի մկրտության վերաբերյալ ավետարանական շարադրանիները (Հովհաննու Ավետարան, Ա, 1-17 և Ղուկասի Ավետարան, Գ, 21-22), այլև նվիրատվական գեղեցիկ հիշատակություն, որ այն 1711թ. նվիրաբերել է տիրացու Արքահամի ընտանիքը:

## ՓԱՅՏԻ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Փայտի գեղարվեստական մշակումը հայոց մեջ

տարածված էր ամենուր: Վարպետները պատրաստում էին եկեղեցիների դռներ, գրակալներ, գահեր և այլն: Արաբական աշխարհում տեղ գտած կիրառական արվեստի տեսակները ընկալվել են նաև հայերի կողմից: Օր. գաղտիկուոյի հնչյուատացիայի արվեստով հայերը հայտնի էին Դամասկոսում, Ջմյուռնիայում, Երուսաղեմում և Հալեպում: Ինկրուստացիայի արվեստի (գաղտիկուոյի՝ սաղափի բարակ և մասր հատվածների զուգորդումը փայտի վրա) լավագույն օրինակներից է առաջնորդական ծիսական զահը սր. Քառասուն մանկունք եկեղեցում՝ ամպահովանիով, շագանակագույն փայտի հատվածների նուրբ մշակումներով: Ամպահովանու շուրջը տեղադրած սրբերի գեղանկարչական դիմանկարները վկայում են, որ այս գործի հեղինակը 1733թ. Հալեպում ստեղծագործող շնորհալի հայ նկարիչ է եղել: Ըստ գրավոր աղբյուրների Հալեպում գաղտիկուոյի մշակման անվանի վարպետ էր «սետեվծի Հակոբ Ամուճան (1755)»:

Հալեպում լայն տարածում ուներ փայտի հարդարման գուտ «սիրիական» տեսակը, որը շատ ավելի մոտ է գեղանկարչությանը: Դամասկոսի և Հալեպի մեծահարուստների տների սենյակների պատերն ու առաստաղը ներսից ծածկում էին փայտով, ապա նկարագարդում: Հալեպում է գտնվում 1603թ. կառուցված Պետրոսի որդի Եսայու առանձնատունը, որի պատերի նկարագարդումները 1912թ. տեղափոխվեցին Բեռլինի Կայսերական թանգարանի արևելյան բաժին և ցուցադրվում է «Հալեպի սենյակ» անվան տակ: Որպես ֆոն ունենալով շագանակագույնը, գեղանկարիչ վարպետները պատի հարթության վրա նկարում էին բազմարնույթ ծաղկագարդ լինվածքներ, համապատասխան տեղերում դրանք առնելով շրջանակների մեջ՝ բարոյախոսական ասույթներով: Արաբեսկների այս շքեղ տարածքներում իշխում են երկնագույնը, կանաչը, կապույտը և ոսկեգույնը: Այսօրինակ հարդարանքով մեծահարուստի մի տուն պահպանվել է

Հալեպի Սարիբին բաղամասում ալ-Սիս փողոցում (գուցե Սսի անունով), որտեղ այժմ տեղավորված է Հայկազյան արական դպրոցը: Տունը հայտնի է «Ղազալիների տուն» անվան տակ (մեծ քակ, ավազանով, երկիհարկանի, ու բազմաթիվ սենյակներով): Մուտքի կողքի սենյակում, պատի վրա արաբերեն արձանագրություն է. «Այս օրինյալ տունը կառուցեց Խաչատուր իրն Մուրատ Պալին, 1691թ.» (սա այն Մուրատ Պալին է, որը 1662թ., իր ընտանիքի հետ արծարյա ձեռաց խաչ է նվիրաբերել սր. Զառասուն մանկունք եկեղեցուն): Սենյակներում, արաբերեն տարրեր ձեռագրատեսակներով գրված են բարոյախոսական ասույթներ (1834թ. այս տունը գնել էր Նումեր Ալլահի Ղազալը): Փայտի դեկորատիվ մշակմամբ հայ վարպետները հարդարում էին տների պատշգամբները, առաստաղները, պատրաստում էին զարդանախշերով հարդարված փայտե գդալներ, զարանախշիկներ, գուլպայի կաղապարներ: Արևելյան երկրներում մեծ տարածում ստացած դաջարվեստի կարևորագույն կենտրոնները եր Հալեպը: Կիրառական արվեստի լույս բնագավառին անհրաժեշտ փայտե կաղապարներ պատրաստող վարպետները հմուտ փորագրողներ էին: Դաջարործ վարպետները պատրաստում էին կենցաղում անհրաժեշտ կտորներ, ինչպես նաև խորանի վարագույրներ: Բազմաթիվ ստեղծագործություններ ժամանակի ընթացքում փշացել են: Պահպանվել է միայն խորանի մեկ վարագույր: Զեռազրերի կազմերի դաշե աստանները վկայում են Հալեպի հայ դաջարործ վարպետների բարձր արվեստը, որոնց գործերը հավասարապես բաժնառում էին Եվրոպիայի, Նոր Զուլայի և Մադրասի հայկական դաջարվեստի փառքը:

Կիրառական արվեստի այսպես կոչված «փափուկ» բնագավառից Հալեպը հայտնի էր իր ասեղնագործությամբ:

Ասեղնագործությունը կարևոր տեղ է գրավել հայերի կենցաղում: Յուրաքանչյուր ընտանիքի կանայք ու աղջիկներ, իսկ անցյալում նաև տղամարդիկ, զբաղվել են այդ գեղեցիկ արվեստով: Հայ ասեղնագործուհիների ստեղծագործական երևակայությունը, գեղեցիկի համբեապ ունեցած բնական հակումները, միջավայրից ու ապրելակերպից թելաղրված ճաշակը, տեղական նյութերի (բուրդ, բամբակ, մետաքսյա թելերը, բարձրորակ բազմագույն բնական ներկատեսակներ) օգտագործման հնարավորությունները, իրենց գեղարվեստական արտահայտությունն են ստացել ամենատարբեր բնույթի աշխատանքներում: Ասեղնագործվում էին կանացի սպիտակեղենն ու հագուստը, կենցաղում օգտագործվող իրերը (ծածկոց, սփոռոց, սրբիչ, անձեռոցիկ), ինչպես նաև ծիսական իրեր (եկեղեցական վարագույր, շուրջառ, սկիհի ծածկոց, խույր և այլն):

Ասեղնագործական արվեստի ակտիվ զուգորդումը հայկական կենցաղին հնարավոր էր դարձնում ոչ միայն հորինվածքների ազատ դրսեորումներ, այլև տեղական կարատեսակների առանձնացումը: Հայտնի են Մարաշի, Ռուհայի, Այնթապի, Զեյթունի կարատեսակները (հիմքը հարրակարն է), որոնք զուտ տեղական ծագում ունենալով, հետագայում տարածվեցին Հայաստանի բոլոր գավառներում: Հալեպի հայ բնակիչների համարյա բոլորի տներում պահպանվել են 18-20-րդ դդ. վերոհիշյալ կարատեսակներով ստեղծված բարձրարվեստ իրեր: Առաջնորդարանում պահպանվել են բազմաքնույթ ասեղնագործական նմուշներ. (շուրջառներ, փորուրաներ, սաղավարտներ, վակասներ, արտախուրակներ, բազպաններ և այլն): Դրանք հիմնականում Այնթապից են, ձեռագործի մի դպրոց, որն աչքի է ընկնում կարատեսակի

արտակարգ նորությամբ ու մաքրությամբ, զարդանախշերի պարզ հյուսվածքներով, թելերի գունային հարաբերությունների հստակությամբ։ Հալեպի ասեղնագործուիհների նախասիրությունների մեջ կարևոր ոսկեթելի ու արծաթելի օգտագործումն է, ինչպես նաև վերադիր և ուռուցիկ կարատեսակները։ Ուռուցիկ և լայն ոսկեթել կապի շնորհիկ ասեղնագործական հորինվածքը ստանում է ծավալ, վերադիր ոսկեթել հավելումների (ոռկոկո) միջոցով ստանում լուսատվերային անցումների մեծ հնարավորություններ։ Այսօրինակ ոսկեթել ուռուցիկ կարատեսակի վարպետ դրսեցրումները կապվում են Կիլիկիայի հայկական թագավորության ասեղնագործական արվեստի հետ (ուշ արծագանքներից պահպանվել են Անքիլիասում, Մեծի Տաճան Կիլիկիո կաթողիկոսարանում): Միաժամանակ, դրանք մեծ աղեքս ունեն Կ.Պոլսի նշանագոր «Գազագի» կարի հետ։ Այսինքն, Հալեպում ունենք հայկական հնագույն ասեղնագործական արվեստի մի մակարդակ, երբ այն, տեղական հետաքրքրություններին զուգորդված ստանում է նոր որակ, ստեղծելով տարրեր գործածության և տարբեր նշանակումներ ունեցող իրեր։ Հալեպի ասեղնագործուիհները նախասիրությունը տալիս են բուսական զարդանախշերին։ Դրանք հիմնականում ոլորապտույտ ճյուղեր են ծաղկատեսակներով, որոնք ասեղնագործ շրեղ հորինվածքներով ծածկում են մետաքսի կամ թավշի տարածքը, զուգորդվելով կարմիր, կապույտ կամ դեղնապուն երանգներին։ Ժօն դարի երկրող կեսին, ինչպես ասեղնագործական մյուս կենտրոններում, նույնպես և Հալեպում ներմուծվում են փուլիկները՝ ոսկեգույն կամ արծաթագույն մետաղյա մանր ու տափակ փայլուն օղակները։ Մեզ հասած տեղական ասեղնագործության օրինակները կարելի են դասակարգել մի քանի խմբերով։ Օր ըստ ավանդության, ասեղնագործական արվեստի ընտիր աշխատանք է եղել Հալեպ Կարկառեցու համար գործված եմիփորոնը, որի արծանագրությունն էր. «... նկարեցաւ

Եմիփորոնս ի քաղաքն Հալեպ, ի վաելումն տէր Յակոբ քաջ բարունապետին, ... կազմեցաւ ի թվականին մերում Ռ-ն ԶԳ (1634) ամին ...»: Եմիփորոնը կանաչ մետաքսից էր, կարմիր բավշի հավելումներով: Ասեղնագործված էր բազմագույն մետաքսաթելերով, մարգարիտներով, ներկայացնելով Հոգեգալուստը, առարյալներին, ավետարանիչներին, սրբացված հայոց հայրապետներին, որոնց անունները տրված էին փակագրերով: Եմիփորոնը որոշ ժամանակ հանգրվանել է Սուում: Նույն արվեստով առանձնանում են սաղավարտներն ու խույրերը: Հիշատակման է արժանի 1608թ. Կ.Պոլսում ասեղնագործված շքեղագույն խույրը. ըսկեթելի, արծաթաթելի ու մետակսաթելի երանգավորումներով, մանրասեղ նրբագույն հարդակարով, որն իիրավի գեղանկարչական ստեղծագործություն է: Խույրի մեկ երեսին ասեղնագործված է «Խաչելությունը»: Կերպարների լուսապսակները ընդելուզված են հնդկական մարգարիտներով, իսկ խաչի ցածում կանգնած կանանց թիկնոցները ուսկեթելի թերև բանվածք ունեն: Խույրի երկրորդ երեսին ասեղնագործված է Աստվածամայրը մանուկը գրկին: Մանկան կերպարում գերիշխում են արծաթագույն երանգները: Շատ հավանական է, որ Կ.Պոլսի եկեղեցիներից մեկի սրբապստկերից է պրոֆեսիոնալ նկարիչը կապույտ բավիշի վրա արտանկարել այն, իսկ բարձրաճաշակ և գեղեցիկի նույր զգացողություն ունեցող ասեղնագործուիհն կարողացել է վերարտադրել գեղանկարչական կերպարի առանձնահատկությունները: Ասեղնագործ այս խույրը կարելի է համարել հայկական ասեղնագործական արվեստի գլուխգործոցներից մեկը:

Հալեպցիները բարձր էին գնահատում արհեստավորական այլ կենտրոնների գեղեցիկ արվեստները, միաժամանակ դրանց ազդեցության տակ ստեղծում էին տեղականը: Ավանդները շարունակվում են:

Գորգը Արևելքում առաջացած կիրառական արվեստի ստեղծագործություն է: Խպամական աշխարհի համար գորգն արտակարգ նշանակություն է ունեցել հատկապես կենցաղում: Գորգի վրա քնում էին, օգտագործում որպես անկողնու ծածկոց և դրան վարագույր, այն աղոթքագորգ էր՝ սեղադղեն: Գորգերը գործվում էին մեծաչափ, ծածկում էին սենյակների հատակը, որի վրա անցնում էր նրանց ողջ կյանքը: Գորգը հիմնականում լինում էր ծաղկանախշ, որը Դրախտի խորհրդանիշ էր: Հայկական գորգերը տարբերվել են իրենց բազմաբնույթ նախշատեսակներով (վիշապագորգեր, արծվագորգեր, կենդանական-բուսական, երկրաչափական, խառը հորինվածքներով և այլն) և միջազգային շուկայում մեծ պահանջարկ ունեին:

Հայկական գորգը ավարի ու հարկի առարկա էր, իսկ գույնով, հարդարման ինքնատիպությամբ, գեղանկարչական մտածողությամբ, խավի փայլով, գործվածքի նրբությամբ և հանգույցների ամրությամբ՝ արևելյան, ինչպես և այլ երկրների գորգերը գնահատելու չափանիշ:

Արաբական աշխարհը նույնպես միշտ նախընտրել ու գնահատել է հայկական գորգը: Դրանով են պայմանավորված 9-14-րդ դդ. արար ճանապարհորդաշխարհագիրների ուղեգրություններում հայկական գորգերին տրված որակումները: Ըվեղացի արևելագետ Ադամ Մեցը դրանցից մեջքերումներ է կատարել իր «Մուտուլմանական վերածնունդ» գրքում. «... ինչ վերաբերվում է բրդյա գորգերին, ապա առաջին հերթին առանձնանում են պարսկականը, հայկականն ու Բուխարականը» (Սաալիրի): «... Օմեյադների խալիֆ ալ-Վալիդ 2-րդի վրանի պատերն ու հատակը ծածկված էին հայկական գորգերով» (Արու ալ-Ֆարազի, Ալի ալ-

Խսժահանի): «... Հարուն ալ-Ռաշիդի կինը նստած էր հայկական գորգերի, իսկ մյուս կանայք բարձերի վրա» (ալ-Մասուդի), «... Հայկական ու բարարիստանյան (մազանդարանական-Ա.Ս., Մ.Դ.) գորգերը 300-312թ. գովում էին Բաղդադի մի մեծահարուստ ոսկերիչի մոտ» (Տարարի): Նույն վերաբերմունքը կար ալ-Մութքադարի մոր առանձնատանը (իրն-Միսլավայիի): Ոմն վասալ խալիֆ ալ-Մութքադարին է նվիրում հայկական յոթ գորգ (Ելիա Նիսիրինցի), 911թ. Էմիր Արուսանը Հայաստանից Մութքադար խալիֆին է ուղարկում 400 ծի, 30000 դինար և հայկական գորգեր, որոնցից մեկն ուներ 60 կանգուն երկարություն և նույնքան լայնություն (Մուհամեդ բար-Յահրա): Նշանակում է այս գորգն ունեցել է ավելի քան 1000մ<sup>2</sup> տարածք: Այս գորգի վրա աշխատել էին տաս տարի: Պարսկական գորգերի մեջ բարձր էին գնահատվում այնպիսիք, որոնք չեին զիջում հայկականին (ալ-Խսրախի): Սպահանի գորգերի արժեքի չափանիշն այն էր, թե որքանով են դրանք նմանվում հայկական շքեղագույն գորգերին (իրն-Ռուսթահ): Կահիրեկի գորգերի պահեստներում շատ հաճախ գովում էին հայկական կարմիր գորգերը (ալ-Մակրիզի): Եզիդական Ասյուտա քաղաքի «մորեգույն» գորգերը բնորոշելու համար ասում էին, որ դրանք նման են հայկականին (իրն-Յակուտի): Յուրաքանչյուր տարի խալիֆին, որպես հարկ, հայկական քսան գորգ էին տալիս (իրն-Խալլուն): Սուլթան Մուհամեդ Ղազինեվացին (10-րդ դ.) հայկական գորգը նվեր է ուղարկել Կաշգարի Կադիր խանին, իսկ Արու Ֆազն Սուրի Մարադին՝ Ղազնևիի սուլթան Մասսադիին, 922թ. Խալիֆ Մութքադարը պատգամավորություն է ուղարկում Կամա-Վոլգյան բուլղարների մայրաքաղաք, խան Ալմասի մոտ, մահմեդականություն ընդունելու և իրեն ենթարկվելու առաջարկով: Պատգամավորության անդամ, մատենագիր իրն-Ֆաղլանը, նկարագրելով տեղի կենցաղը, գրում է նաև, որ խանի վրանի մեծ մասը ծածկված էր հայկական

գորգերով։ Դվինում գործված բարձրարվեստ հյուսվածքների մասին հիշատակում են մի քանի արար հեղինակներ։ Իբն-Հաուկալն իր «Գիրք ճանապարհների ու քաջավորությունների» աշխատության մեջ գրում է. «Դարիլում պատրաստում են թեթև բրդյա կտորներ, գորգեր, բարձեր, օթոցներ, կապիչներ և հայկական այլ արտադրանքներ, որոնք ներկված են կրրմիզով (որդան կարմիր - Մ.Դ., Ա.Ս.)... Սրանց հավասարը չկա այլ երկրներում... շատ քիչ երկրներ կան, որոնց գործվածքները նման լինեն հայկականին»։ Արար աշխարհագիր, Բալխի իշխանի քարտուղար Ալ-Խսբախիրին (10-րդ դ.), իր «Թագավորությունների ճանապարհներ» գրքում նույնպես գրում է Դվինի մասին. «Այդ քաղաքում պատրաստում են բրդե զգեստներ ու գորգեր, մութաքաներ, ... և հայկական այլ իրեր»։ Նույնը հաստատում է նաև ճարտարապետների ընտանիքից սերած ալ-Մութքադարին (947/948). «Դարիլից արտահանում են մահուղ, գորգեր, բարձեր և նշանավոր կապիչները»։ Մեծ Հայքի Ռոտիք նահանգի Պարտավ քաղաքի մասին, որը Գարդմանի իշխանի աթոռանիստն էր և Դվինից հետո երկրի ռազմավարչական ու արհեստա-առևտրական հայկական մեծ քաղաքը, նույն ալ-Մութքադարին գրում է. «Այդտեղ պատրաստվող կապիչների ու գորգերի նույնիսկ նմանը չկա այլ տեղերում»։ Յակուբ ալ-Համավին, իր «Աշխարհագրական քառագրում» նշում է Վանում գործվող մեծաշափ գորգերի մասին։

Հիշենք, որ աշխարհի հնագործ գորգերից մեկը «Գրաֆի գորգ» անունը ստացած վիշապագորգը (ԺԵ դ., Բեռլին, կայսերական թանգարանի արևելյան բաժին), նախապես Դամասկոսի մզկիթներից մեկում էր (Հայաստանից տարված նվեր կամ հարկ չի՞ եղել արդյոք...)։ Հետագայում այն անցավ Թեոդոր Գրաֆին (այստեղից էլ գորգի անվանումը)։ Անվանի արևելագետ Ռ.Բողեն, որին հետագայում պատկանում էր գորգը, այն համարեց «կենդանական զարդանախշերով հայկական գորգ՝

վիշապագործ»: Այդ անվան տակ էլ գորգը ցուցադրվեց ինչպես 1891թ. Վիեննայի, նույնականացնելու և 1910թ. Մյունխենի իսլամական արվեստի ցուցահանդեսներում:

Ինչպես տեսնում ենք, հայկական գորգերի ու գործվածքների առաջին բարձր զնահատողները, արարեներն էին: Ուշագրավ է նաև, որ Հալեպի Սեծ Մզկիթում այսօր էլ պահպանվում են հայկական մի բանի հնագործ գորգեր:

**Հալեպի** արհեստավորությունը, կրոնագաղափարական առումով, շատ ավելի հակված էր դեպի մետաղամշակությունը, խեցեգործությունը, և հատկապես, դեպի գորգագործությունը: Ելեկով արար աշխարհագիրների վերոհիշյալ վկայություններից, պետք է ենթադրել, որ մինչև 15-րդ դարը արարական երկրներ գորգը ներսունձվում էր հիմնական Հայաստանից: 17-18-րդ դդ., Հալեպում, գորգագործական արհեստանոցների հիմնադիրները եղել են հայերը:

Գորգը բարդ հյուավածք է: Թեև երի մշակումը, ներկերի (այդ բվում նաև Որդան կարմրի) ներմուծումը առևտրական ճանապարհներով Հայաստանից Սիրիա, հայերի մենաշնորհն էր: Հալեպի հայկական գորգերի գունային և զարդանախշային հարստությունն էլ դարձավ տեղի հայ գորգագործության առանձնահատկությունը, որը մեծապես ազդեց նաև արարական կիրառական արվեստի այս ճյուղի վրա ընդհանրապես:

Այսուղի գործվող գորգերը յուրահատուկ շքեղություն ստացան, երբ անցյալ դարի վերջերին սկսեցին Հալեպ գաղթել սեբաստացի արհեստավորները: Գաղթականության հոսքն առավել մեծ չափեր ստացավ 1915թ. Սեծ եղեննից հետո, երբ Հալեպում բնակություն հաստատեցին նաև Սեբաստացի բազմաթիվ գորգագործներ ու գորգերի մասնագետներ:

Սեբաստացիները գորգագործական արվեստին տիրապետում էին շատ հնուց և շատ ավելի ակտիվ շարունակեցին իրենց գործը 1021թ. Սենեքերիմ-Հովհաննես

Արծրունու հետ Վասպուրականից գաղթած գորգագործ վարպետների շնորհիվ: Սեբաստիայի գորգերն այնքան գեղեցիկ էին, որ վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոն (ԺԳ դ. առաջին տասնամյակ) հատուկ հիշատակություն ունի այդտեղի հայկական գորգերի մասին: Սեբաստացի գորգագործները նոր կյանք հաղորդեցին Հալեպի այդ դարավոր արվեստին: Նրանք իրենց հետ Հալեպ բերեցին նաև տեղական հնագործ գորգեր, որոնց օրինակները կարելի է տեսնել Հալեպի հայերից շատերի տներում (Գրիգոր Մազլումյան, Համբիկ և Արմեն Ինճիճյաններ, Զավեն Առաքելյան և այլք): Հալեպի արհեստավորական գորգագործությունը գեղարվեստական նոր մակարդակի բարձրացավ հանձին պրոֆեսիոնալ գորգագործների ստեղծագործական միջամտության (Հ. և Վ. Սառաֆյաններ, Ա. Ինճիճյան և այլք): Տոհմական գորգագործական միավորումներում ներգրավվեցին գորգի նկարիչներ Դովլեք Գարանիլյանը, Արտաշես խան-Սուլթանյանը, Սեպուհ Լուսարարյանը: Վերջին երկու նկարիչների գորգերը ներկայացված են «Զարեհյան գանձատանք»:

Դրանցից մեկը՝ 1904թ. Հալեպում գործված մետաքսաթել գորգն է: Այն պատվիրել է կեսարացի Կարապետ քահանան, իր մերձավորների հիշատակին, և նվիրաբերել Հալեպի սր. Քառասուն մանկունք եկեղեցուն: Գորգի կենտրոնում ներկայացված է Էջմիածնի Մայր տաճարն ու զանգակատունը: Հեռանկարային պատրանք են ստեղծում բակում կանգնած վանականների ֆիգուրները: Գորգի հիմնական ֆոնը բաց կապտագույն երկինքն է: Գետինը գործված է արծաթավուն երանգներ ունեցող թելերով իսկ ծառերը կազմում են մուգ կանաչագույն հատվածներ: Պատկերը ստանում է շքեղ տպագործություն հանգույցների նրբությունից, հարք և մաքուր հյուսվածքից, ինչպես նաև խավի արտահայտչականությունից: Գորգի նկարիչը՝ Արտաշես խան-Սուլթանյանը ունի

գեղանկարչական զգացողություն և տիրապետում է գորգին առանձնահատուիկ գեղարվեստականության օրենքներին: Գորգի շրջագոտին լայն է, եռաշերտ՝ բնորոշ հայկական գորգերին: Շրջագոտու անկյուններում տեղադրված են Գրիգոր Լուսավորչի, Սեսրով Մաշտոցի, Սահակ Պարթևի և անհայտ հոգևորականի դիմանկարները: Այս գորգը հայ գորգագործությանը ոչ բնորոշ սյուժետային աշխատանքներից է:

Գորգագործական երկրորդ նշանակալից աշխատանքը գորգ-խաչվառն է որի նկարիչը Սեպուհ Լուսարարյանն է, իսկ գործողները սերաստացի Կ. և Վ. Քեհակիան քույրերը: Խաչվառի մանր հանգույցները հնարավոր են դարձնում պահպանել հավերժական «Հարության» սյուժեի գեղանկարչական արտահայտչականությունը:

«Սերաստիա-Հալեպ» ուշ շրջանի գորգագործական դպրոցը Հալեպում զարգացրել է Ինճիճյան ընտանիքը: Մեծ հայրը՝ Համբարձումը պահպանեց Սերաստիայում հիմնավորված տոհմի հետաքրքրությունը դեպի գորգագործությունը: Գործը սկսեց մի մեծ քոնրատան մեջ, որտեղ 400 աշխատող ուներ (հիմնականում՝ հայ աղջիկներ): Որդիները շարունակեցին հոր գործը: Աշխատանքները դեկավարում էր Սենեքերիմը, իսկ փոքր եղբայրը՝ Բարեղամը տարին մեկ անգամ գնում էր Վառնա (Բուլղարիա) ու կազմակերպում վաճառքի հարցերը: 1915թ. Մեծ եղեռնից հրաշքով փրկված ամենակրտսեր որդին Արգարը իր ընտանիքով սկսեց աշխատել Սառաֆյանների գորգագործական արվեստանոցում: Արգարի որդիներ Համբիկն ու Արմենը գորգ ու կարպետ են վերանորոգում (հազվագյուտ մի արիեստ): Հնագործ գորգերի հավաքածուներ ունեցողները նրանց են Վատահում իրենց գորգերի նորոգումը: Եղբայրները ժառանգեցին գորգերի հայրական հավաքածուն, համալրեցին այն, որն ընդգրկում է 18-20-րդ դդ. «Արծվագորգեր», «Օձագորգեր», «Զիլե»

անունը ստացած օճակարպետներ, Կեսարիայի, Սեբաստիայի, Արցախի, Հալեպի ինչպես նաև այլ երկրների գորգատեսակներ:

Հալեպի հայ գորգավաճառների խանութներում, այսօր էլ, արաք գնորդները նախասիրությունը տալիս են հայկական գորգերին:

## ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հալեպի սր. Զառասուն մանկունք և սր. Աստվածածին եկեղեցիներում պահպանվել են բազմաթիվ աշխատանքներ, որոնք զալիս լրացնում են 17-18-րդ դարերի հայկական գեղանկարչական արվեստը: Այս դարերում հայ նկարչությունը զարգանում է ինչպես Հայաստանում, նույնպես և զաղբավայրերում. Նոր Ջուղա (Սինա, Հովհաննես Մրգուզ), Մոսկվա (Բոգդան Սալթանով), Լեհաստան (Բոգուշներ), Կ.Պոլիս (Մանասներ), Թիֆլիս (Հովհանքանյաններ), Երուսաղեմ (Հովհաննես Երուսաղեմցի), Կահիրե (Հաննա Երուսաղեմցի), Հռոմ (Հովհաննես Պատկերահան) և այլն: Նույն այդ ժամանակ մեծ զարգացում է ապրում Հալեպի հայկական նկարչությունը, որի մի մասը ժամանակի ընթացքում ոչնչացել է, իսկ որոշները պահպանվել են միայն եկեղեցիների պատերին: Մի զգալի մասը, սկացած ու փշացած վիճակում, անուշադրության էր մատնված Հալեպի սր. Զառասուն մանկունք եկեղեցու պահոցներից մեկում: Հալեպի նկարների հավաքածուն կարելի է բաժանել երեք խմբի.

ա) Հումական սրբապատկերներ:

Մրանց առկայությունը հայկական եկեղեցիներում պատահական երեսություն չէ: Սր. Զառասուն մանկունք և սր.

Աստվածածին նկեղեցիները հունականների հարեանությամբ էին: Հունադավան հավատացյալները սրբապատկերներ են նվիրել նաև հայ լուսավորչական եկեղեցիներին: Դրանք հիմնականում Աստվածամորը մանկան հետ պատկերող փոքրաշափ սրբապատկերներ են, փայտի վրա, արված լեկասով, ԺԵ-ԺԸ դարերի տեղական դպրոցի օրինակներ, որոնց հեղինակներն ապրել ու ստեղծագործել են Հայեապում: Այս սրբապատկերների համար սկզբնաղբյուր են հանդիսացել նախկինում գոյություն ունեցած, ծագումով հունական, դասական օրինակները, որոնց մեկնարաանումներն ու գեղանկարչական հորինվածքները բյուզանդական արվեստի ուշ արձագանքներ են: Այս սրբապատկերներն ունեն հետագայում արված արձաքյա հավելումնը: Բյուզանդական սրբանկարչությունը ստեղծեց նաև մեկ տախտակի վրա բազմաթիվ սյուժեների առկայությունը, որից մեկ օրինակ նույնպես պահպանվել է հայկական եկեղեցում: Աստվածամայրը մանկան հետ ներկայանում է սր. Նիկողայոսի, սր. Գևորգի, սր. Պողոսի և սր. Պետրոսի հարեանությամբ: Չորս սրբապատկերից բաղկացած, սակայն գեղանկարչական միասնական մտածողությամբ ստեղծված և բյուզանդական նախաօրինակով արված, այն տեղական սրբապատկերային արվեստանոցի տիպական օրինակ է: Պահպանվել են նաև ոռուսական օրինակներ: Դրանք կամ Ռուսաստանի սրբանկարչական կենտրոններից են, կամ Երուսաղեմի ռուսական արվեստանոցներից: Իր գեղանկարչական հստակությամբ հետաքրքիր է «Դիեցնող Աստվածամայրը» փոքր սրբապատկերը (27x21), որը ծածկված է եղել ոսկեզօծ արձաքյա դրվագված պատյանով (այն հայկական եկեղեցուն են նվիրաբերել Մահաւոհ Մկրտիչն ու իր կողակից Հոփիսիմեն 1787թ.): Երկրորդը՝ «Ավետումը» (30x20), ունեցել է նույնատիպ պատյան և նվիրաբերվել է 1846թ.:

թ) Նկարչական աշխատանքների երկրորդ խումբը

Իիմնականում ներկայացնում է անհայտ հայ նկարիչների ստեղծագործությունները, որոնք ապրել են Հալեպում, կամ ստեղծագործել են հայկական տարբեր կենտրոններում: Օտար Վայրերից այս գործերը Հալեպ են հասել ուխտավորների կամ նվիրակների միջոցով: Նկարները գեղարվեստական մտածողության որոշակի սահմանազատումներ ունեն, որոնք և իմք են հանդիանում նրանց խմբավորման, ինչպես նաև առանձին ստեղծագործողների անհատականությունները բնորոշելու ու դրանք շրջանառության մեջ դնելու համար: Որոշ նկարների արձանագրություններից հայտնի են դասնում ԺԵ-ԺԹ դդ. Հալեպում ստեղծագործած նկարիչների մի քանի նոր անուններ. Տեր-Սկրտիչ քահանա, Բարսեղ Կեսարացի, Ներսեսի որդի Հակոբ և այլք:

Սր. Պետրոսին և սր. Պողոսին ներկայացնող նկարը կենտրոնում եռազմբեք սյունազարդ ճարտարապետական հորինվածք ունի, իսկ երկու կողմից՝ սրբապատկերներն են: Նկարի համամասնությունների պահպանմանը գուգահեռ, նկարիչը՝ Մուրատը մեծ նշանակություն է տալիս զգեստների, ավետարանի և այլ մանրամասների պատկերումներին: Սա պատահական երևույթ չէ: 17-18-րդ դարերի հայ գեղանկարիչների համար նկարի մեջ կարևոր գաղափարի մտահղացման ճշմարտացի արտացոլումն է: Նկարն ունի հայերեն և արաբերեն արձանագրություններ. «Գլուխ սուրբ հաւատոյ, իիմն եկեղեցւոյ, վէմն Պետրոս եւ անձառ անօրենութեան պատմող, անօրն ընտրութեան Պօղոս Ռ-ԱՐ- (1755) Մուրատ»: Արաբերեն. «այս սուրբ պատկերը Քառասուն մանկանց եկեղեցւուն է նվիրում Տէր Սարգսի որդի տիրացու Գրիգորը 1871»: Սա շատ կարևոր արձանագրություն է: Հալեպի նկարների զգալի մասը տարբեր ժամանակներում վերանորոգվել են: Յուրաքանչյուր նվիրատու և կամ վերանորոգողը նկարի կարեռագույն հատվածներում քողել են իրենց հիշատակությունը: Այս դեպքում գործ ունենք ոչ

պրոֆեսիոնալ մարդկանց հետ, որոնք նկարը չեն գնահատում գեղարվեստական արժանիքներից ելնելով: Նրանց համար նկարը մի իր է, որը նախատեսված է միայն նվիրաբերման եկեղեցուն: Այս տեսակետից համեմատաբար շատ է հանդիպում Մուրատ նկարչի անունը, որը սկզբնական շրջանում հանդես է գալիս որպես նկարիչ-կատարող, իսկ 19-րդ դարի սկզբին՝ նկարիչ Վերանորոգող: Նրա նկարներից է «Խորհրդավոր Ընթրիքը»: Շատ հավանական է, որ նկարը ստեղծվել է 18-րդ դարի վերջերին: Հայերեն և արաբերեն նվիրատվական արձանագրության մեջ նշված 1853-ը, վերանորոգման տարեթիվն է, իսկ հիշատակված «Մուրատ» անունը՝ վերանորոգողն է: Կան նաև մի քանի այլ վերանորոգված նկարներ Մուրատի ձեռքով (օր. «Ար Վարվառեն»):

«Սր. Մինաս» նկարը քավական հետաքրքիր գեղանկարչական համադրություններ ունի: Նկարիչը՝ «Նկարեցաւ ի Հալէպ ճեռամբ տէր Մկրտիչ քահանային ...»: Նա 19-րդ դարի սկզբի Հալեպի նշանավոր գրիչներից ու ծաղկողներից էր:

Հայկական ծագում ունեցող նկարներից նշանակալից է «Դեպի Գողգոռա» ստեղծագործությունը: Թվում է քեզասական հորինվածք է, սակայն նկարիչն իրեն դրսնորում է ազատ մտածողությամբ (Հիսուսի առջև կանգնած երկու զինվորներից մեկը ճեռքին ունի վառվող ջահ, իսկ մյուսը երկարել է կավե ամանով քացախը): Վերևում Աստվածամայրն է կանանց հետ, իսկ ֆոն հանդիսացող երկնակամարի վրա հատուկ ընդգծված են երկնային լուսատունները, որպես ողբերգություն ավետող նշաններ: Նկարի հեղինակը Հալեպում ստեղծագործող կեսարացի Բարսեղն է, որի որդիներ Սարգիս ու Գևորգը 1826թ. այն նվիրաբերել են եկեղեցուն: Բարսեղին որդիները անվանում են «պատկերահան», մի քնորշում, որը հատկանշական է նոր շրջանի նկարիչների համար:

Մեկ այլ նկարչի՝ Ներսեսի մասին հիշատակություն

ունենք «Ավետում» (30x25) նկարի վրա: Ավետման տեսարանը բավական զգացմունքային է, հատկապես ծնկաչոր Աստվածամոր կերպարը: Ուշագրավ է, որ այստեղ, արաջին անգամ հանդիպում է մի կարևոր հավելում. Գարբիել հրեշտակապետին ուղեկցում է մեկ այլ հրեշտակ: Ամբողջը պատկերված է շրեղ ծաղկանկար ֆոնի վրա, որի շնորհիվ պատկերը առանձնակի զվարքություն է ստանում: Նկարի արարելեն արձանագրությունն է. «Նկարս Եղիկելի Անանիային, գծագրութեամբ Ներսեսի, որդի Եղբայր Յակոբի 1731»: Աշխատանքն արված է փայտի վրա, լևկասով: Նկարի սյուժենտային հորինվածքը գծագրել է Ներսեսը, իսկ գեղանկարչական գործը կատարել է Անանիան, մի նկարիչ որի անունը կապվում է մուսավիրների (նկարիչների) գերդաստանի հետ:

Հայկական թեմայով աշխատանքներից առանձնակի պետք է նշել Ներսես Շնորհալուն ներկայացնող կտավը, որն արձագանքներ ունի ինչպես Էջմիածնի վանքի, նույնպես և Երուսաղեմի սր. Հակոբյանց վանքի 18-րդ դարի հայկական նկարչության հետ: Բավական հետաքրքիր է այս նկարի կառուցվածքը: Կենտրոնական կերպարը՝ Ներսես Շնորհալին ծիասկան հագուստով է, օրինողի դիրքով (հար և ճման Էջմիածնի Մայր տաճարի համար Հովհանքան Հովհանքանյանի՝ (1730-1801/02) կատարած աշխատանքների սրբերին և հոգևորականների կերպարներին): 18-րդ դարում տիրացու մահտեսի Հակոբի որդի Ներսեսը նկարը նվիրաբերել է սր. Աստվածածն Եկեղեցուն: Ի՞նքն է նկարել ...: Սա այն Ներսեսն է, որը 1731թ. Անանիայի հետ նկարել էր «Ավետումը»: Շնորհալու պատկերը կրկին նորոգվել է Ռ-ՄՀ (1826) թվին (շատ հավանական է նույն Մուրատի ձեռքով):

Հալեայի գեղանկարչության մեջ առանձնակի տեղ է գրավել Աստվածամոր կերպարը: Տարբեր շափերի կտավների վրա նա ներկայանում է երեխան գրկին, գահակալ, հրեշտակների կողմից թագադրվելիս, երբեմն

շրջապատված սրբերով (Հովհաննես Մկրտիչ, Գրիգոր Լուսավորիչ և այլն):

Հայ հավատացյալները, հատկապես Խտալիայից, Հալեպ էին քերում նաև գեղանկարչական ստեղծագործություններ: «Մոգերի երկրպագությունը» (ԺԷ դ.) նկարին բնորոշ է վենետիկյան դպրոցին հատուկ կոլորիտային շքեղությունն ու պայծառությունը: Այն վերանորոգվել է 1826-ին նույն Մուրատի ձեռքով:

Սր. Քառասուն մանկունք եկեղեցու զարդն է «Աստվածամայրը մանկան հետ» («Դիեցնող Աստվածամայրը») շքեղագույն աշխատանքը: Ըստ ավանդության, նկարը խտալական վերածննդի խոշորագույն նկարիչ Լեռնարդո Դա Վինչիի (1452-1519) ստեղծագործությունն է: Ըստ մեկ այլ վարկածի, եթե ոչ Լեռնարդո Դա Վինչիի, ապա նրա աշակերտներից մեկի կամ նրա դպրոցում է ստեղծված: Փաստ է այն իրողությունը, որ դա խտալական Վերածննդի տաղանդավոր արվեստագետի գործ է, որտեղ դրսեորվել են տվյալ ժամանակի գեղագիտական ու գեղարվեստական սկզբունքների առանձնահատկությունները: Պատկերված Աստվածամոր իդեալականացված կերպարի ներքին ոգեշունչ շեշտվածությունը, նրա դեմքի ու ձեռքերի մոդելավորումը, որդու հետ ունեցած հոգատարությամբ ու ներքին զգացումներով բնորոշվող կապը, այս աշխատանքը բարձրացնում են կատարյալի մակարդակի:

Հալեպի սր. Քառասուն մանկունք եկեղեցու նկարագրումների կենտրոնը՝ մինչ մեր օրերը պահպանված «Ահեղ Դատաստան» մեծադիր աշխատանքն է, հայերեն ու արաբերեն արձանագրություններով:

Հայերեն. «Յիշատակ է դատաստանի պատկերս սուրբ Քառասունից համորեին քահանայից և ժողովրդեաց շինեցաւ աշխատութեամբ ի մոմնութեան Կարապետի որդի մահտեսի Գրիգորին ձեռամբ. ... թվին հայոց ՌՃԾԵ» (1708):

Մոմճի Կարապետի անունը հանդիպում է «Զարեհյան

գանձատան» 1701թ. քափորի խաչի արձանագրության մեջ, որտեղից պարզվում է, որ «քազում գործ» ունեցող ուսկերիչ էր: 1708թ. ստեղծված այս աշխատանքի մեջ մասն ունի նաև նրա որդի մահտեսի Գրիգորը: Արաբերեն արձանագրությունն է. «Եւ էր աշխատող շինութեան Դատատանի այս սուրբ պատկերի մղյա Գրիգոր, որդի մոմճի մահտեսի Կարապետի, օժանդակութեամբ հայոց քրիստոնեայ բոլոր քահանաներին, Քառասուն մանկունք մեծառեալ եկեղեցու համար ի քաղաքն աստուածավախ Հալեպ ...: Եւ այդ եղավ թվին քրիստոնեական 1708 ...: Նկարեց իր անցաւոր փառքելիք ձեռքնվ համեստ քահանա Նիմաթուլլահ ալ-Մուսավիր, որդի Հուրիե Եասուֆ ալ-Մուսավիրի և սրա որդի Անանիա ...: Եւ այդ եղաւ ի թվին հօրն մերոյ Աղամա ... 7216»: Նշանակում է, այս նկարի ստեղծողներն են Կարապետի որդի մահտեսի Գրիգորը (մինչև այսօր նրա անունը չի ընթերցվել որպես նկարիչ), Յուսուֆ ալ-Մուսավիրի որդի քահանա Նիմաթուլլահը և սրա որդի Անանիան:

Գրիգորի նկարչական աշխատանքների մասին այլևս ոչ մի տեղեկություն չկա և, փաստորեն, որպես նկարչի, նրա անունը շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

Ովքեր են Յուսուֆի որդի Նիմաթուլլահը և նրա որդի Անանիան: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ 17-րդ դարում Սիրիայում և, մասնավորապես Հալեպում առաջացած քրիստոնեական մի ուղղության մշակույթին՝ Սելջիք արվեստին:

«Սելջիք» բառը ծագում է «մելիք, քաղաքոր, կայսր» բառերից: 451թ. Քաղկեդոնի ժողովից հետո, Երուսաղեմի, Սիրիայի և Եգիպտոսի քրիստոնյաների մի մասը կապվում է հունական կայսերական իշխանության հետ և ենթարկվում երեք պատրիարքությունների: Այս դավանանքին հարողները կոչվեցին «Սելջիքներ»: Բացի վերը նշված երկրներից ապրում են նաև Սիրիայում, Եգիպտոսում, Լիբանանում, ինչպես նաև Ամերիկայում, Կանադայում և Ավստրալիայում:

17-րդ դարի Հալեպի հայ համայնքի կրոնական բազմաշերտվածությունը (լուսավորչական, կաթոլիկ, մելքիր) գրավել է տարրեր ուսումնասիրողների ուշադրությունը:

Դարերի ընթացքում մշակվել է մելքիր Եկեղեցիների ճարտարապետական կերպարը, որի լավագույն օրինակները կարելի է տեսնել Զյուգում, Մալյուլյայում (Էլիքանան), ինչպես նաև Հալեպում: Եկեղեցիների ինքնատիպ արարողությանը համապատասխան, ստեղծվում էր նաև մելքիր հոգևոր երաժշտությունը: 17-րդ դ. կեսերին ձևավորվում է նաև մելքիր նկաչությունը: Մշակութային այս վերելքը հովանավորվում էր Մակարիոս Գ պատրիարքի կողմից, որը գրականության և արվեստի նկատմամբ ունեցած իր սերն ու դրանք հովանավորելու ձգուումը ժառանգել էր իր նախորդներից: Մակարիոս Գ-ն հայտնի է նաև Մակարիոս իրն ալ-Չայիմ ալ-Հալապի ալ-Անթաքի անունով (?-1672թ.): Անտիոքի պատրիարք էր ընտրվել 1647թ., դեկտեմբերի 12-ին: Հիմնական արուանիստը Դամասկոս էր: Կրոնի պահպանության համար անհրաժեշտ էր նաև անզրագետ ժողովրդին ավետարանական սյուժեների էռթյանը հաղորդակից դարձնել գեղանկարչական կերպարների միջոցով: Հավանական պետք է համարել նաև այն, որ մելքիր Եկեղեցիների ձևավորման համար խթան է հանդիսացել պատրիարք Մակարիոս Գ-ի և նրա որդի Պավելի (Պավել Հալեպցի՝ Պոլոս իրն ալ-Չայիմ ալ-Հալապի /1627-1669/) ճանապարհորդությունը Ուուսաստան, երբ, ըստ պատրիարքի ճանապարհորդական նորերի, նրա վրա մեծ տպավորություն է բռնել Ուուսաստանի գեղանկարչական կյանքը և Եկեղեցիների գեղարվեստական հարդարանքը: Ուուսաստանից նաև Հալեպ էր բերել ուուսական սրբապատկերներ: Մակարիոս Գ-ն երկու անգամ է եղել Ուուսաստանում (1652-1659 և 1664-1669թթ.): Առաջին անգամ նա անցել է Թուրքիայով, Վալախիայով և Ուկրաինայով: Երկրորդ ճանապարհորդության ժամանակ՝ նա իր որդու հետ

լինում է նաև Վրաստանում (Թիֆլիսում, Քութախում, Մինգրելիայում): Այստեղ նրանք անց են կացնում մոտ երկու տարի: Որդին՝ Պավելը ավելի երկար է մնում և այնտեղ էլ մահանում է: Պավել Հալեպցին զրի է առել հոր հետ կատարած իր առաջին ճանապարհորդությունը, որը 1700թ. արտագրվել է Սիրիայում և այժմ պահպանվում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի Ս.Պետերբուրգի բաժանմունքի ձեռագրային բաժնում: Այն, մի քանի տասնյակ այլ ձեռագրերի հետ, Ռուսանով բազավորական տան 300-ամյակի կապակցությամբ (1913) իր հետ Ս.Պետերբուրգ էր բերել Անտիոքի պատրիարք Գրիգոր Դ-ն, որը գրականագետ էր, խմբագիր և ուներ ձեռագրերի ու հնատիպ գրքերի մեծ հավաքածու:

Մակարիոս Գ-ն ճանապարհորդությունների ժամանակ իր հետ մի շարք ձեռագրեր ուներ: Դրանց մեջ էր նաև մեկը, հետևյալ վերնագրով «Հոռոմների թագավորների մարդարտաշար պատմությունը», որն ընդգրկում է Բյուզանդիայի կայսրերի և Օսմանյան սուլթանների պատմությունը, սկսած Կոստանդինից մինչև Սուլթան Մուրադ Գ-ն: Հեղինակն է Մատթեոսը, անուանեալն Զիգալա Կիպրոսի: Այն հունարենից արաբերեն է թարգմանել Եուսուֆ քահանան, Քուլուս (Պաուլուս) սարկավագի օգնությամբ, Հալեպ քաղաքում, 1648թ. և դա կատարվել է սրբազն պատրիարք Հալեպցի Տէր Մակարիոսի հրամանով, որն առաջնորդն է Անտիոք քաղաքի և համայն Արևելքի»: Ձեռագիրը ներկայացնում է Մատթեոս Զիգալայի (հայտնի է նաև Զիգալա կամ Կիգալա /Tzigala կամ Cigala/ անուններով) «Քրոնիկները»: Սրանց հունարեն բնագիրն առաջին անգամ գրվել է 1637թ. Վենետիկում, մի շարք հավելումներով:

Մակարիոս Գ-ն աշխատանքի թարգմանչական գործը հանձնարարել է իր դեկավարած գրական խմբակի ակտիվ և շնորհալի մասնակիցներ Հովսեփ ալ-Մուսավիրին

և իր որդուն: Սրանք երկուսն էլ ժամանակի զարգացած անձնավորություններից էին և տիրապետում էին մի շարք լեզուների:

«Քրոնիկների» արարերեն ծեռագիրը բաղկացած է 203 թերթից, գրված է «Նասխ» ծեռագրատեսակով և շրեղ ծեավորված է: Զեռագրի 130-րդ էջում Մակարիոս Գ-ի ծեռորդ Գրված է, որ այն նկարազարդել է «հանգուցյալ քահանա Հովսեփ նկարիչը»:

Զեռագրի 94 մանրանկար-դիմանկարները օժտված են տիպաժային առանձնահատկություններով: Կայսրերն ու սուլթանները ներկայացված են կրծքից կամ ծնկներից: Առանձնակի մանրամասներով են վերարտադրված քագավորական զգեստները, քագերը, գայխոններն ու տիրագնդերը: Նկարիչը ճգոտում է շեշտել հատկապես քանկարժեք քարերի գունագեղությունը: Զեռագրի յուրաքանչյուր դիմանկարի վրա տեղ են գտել նրանց հունարեն, երբեմն նաև արարերեն անունները: Հետազայում, Թիֆլիսում, Վրաց քագավոր Վախթանգ Զ-ն (1675-1737) անունները գրել են տվել նաև վրացերեն: Անհայտ ճանապարհներով «Քրոնիկների» արարերեն քարգմանությունը նորից վերադարձել է Սիրիա, 1762-ին պատկանել է մի արար քրիստոնյայի, իսկ 1777-1784թթ. այն Խիսա Բուրրոս և Անտոնի Բուրրոս աս-Սամխանի սիրիացի եղբայրների սեփականությունն էր: 18-րդ դ. Վերջում ծեռագիրը Հալեպում էր, որտեղ այն գնում է Հալեպում և Տրիպոլիում ֆրանսիական հյուպատոս, անվանի կոլեկցիոներ Ժ.Լ.Ռուստոն: 1819-1825թթ. նրա հավաքածուն գնեց Ռուսական կառավարությունը և նվիրեց Ս.Պետերբուրգի Ասիական թանգարանին: Նույն Ասիական թանգարանում է պահպանվել Հովսեփի կողմից արտագրած և նկարազարդված ծեռագիրը «Զրուուր Դաուդ Նարիի» խորագրով՝ Դավիթ մարգարեի սաղմոսներ գիրքը, ստորագրած «Յուսուֆ իրն Անտոնիոս, աշակերտը մեծ պատրիարք Ավքիմոսի»: Զեռագիրը նա ավարտել է 1641թ.

դեկտեմբերի 21-ին, որի առաջին օրինակը պահպանվում է Քեյրութի մոտ գտնվող Ներիսայի սք. Պավելի վանքում: 1649թ. ընդօրինակած նրա մեկ այլ ձեռագիր՝ Քեյրութի արևելյան գրադարանում է, իսկ մեկ Ավետարան՝ Քալեմանդի վանքում: Ինչպես տեսնում ենք, Անտոնիոսի որդի Հովսեփը իր գործին նվիրված անձնավորությունն էր: Նրա ձեռագրերի թիվը հասնում է 10-ի: Հովսեփը մեր ուշադրությունը գրավել է նրանով, որ եղել է Հալեպի հայ համայնքից, հունա-օրթոդոքս (մելքիք) դավանանքն ընդունած: Հալեպի հայ համայնքին Հովսեփի պատկանելությունը վկայում է նաև ճիզվիք վարդապետ Ֆերդինանդ Բաուրելը:

Հովսեփը մելքիք արվեստի առաջին նկարիչներից էր: Նկարչությունը ստվորել է իր ուսուցչի, Սակարիոս Գ.-ի նախորդ Մալանթիոս Կարմենից, որը գրադպում էր սրբանկարչությամբ: Հետագայում, Սակարիոսի գրական խմբակում Հովսեփը հաղորդակից դարձավ բարգմանշական և կազմարարական արվեստներին, գեղագրությանը: Նա տիրապետում էր հունարենին, արաբերենին, հայերենին: Եղել է նաև Երուսաղեմում, որի վկայությունն է որդու՝ Նիմաթուլլահի «ար. Գևորգի մենամարտը» (1717, Լիքանան, Ջուգի սք. Սիրայելի հունա-օրթոդոքս եկեղեցի) նկարի վրա, «ալ-մահտեսի» հիշատակագրությունը:

Հովսեփի ալ-Մուսավիրը նաև մեծահամբավ սրբանկարիչ էր: Նրա այդօրինակ աշխատանքներից պահպանվել է ավելի քան 20-ը, որոնցից 14-ը Հալեպի Համմայի հունա-օրթոդոքս համայնքի առաջնորդարանում, Լաբարիայի սք. Նիկողայոս հունա-օրթոդոքս եկեղեցում (4 գործ), Քեյրութի Նիկոլա Սուրբուկի քանօքարանում, ինչպես նաև մասնավոր հավաքածուներում (Հենրի Ֆարանի - 2 գործ, Զորջ Անթաքիի հավաքածու - 2 գործ): Հովսեփի կողմից կատարված երկու սրբապատկերներ պատկանում են Հալեպի մելքիք եկեղեցու առաջնորդ, եպիսկոպոսապետ, գերաշնորհ Սիաղեթ ալ-Մետրոպոլիտ Նաֆու ֆիբուսի

Էղերբինին (72-ամյա առաջնորդի մայրը՝ Լուսյա Բատուկյանը - հայ էր): Սրբապատկերներից մեկը ներկայացնում է Սիրայել հրեշտակապետին, ուկեզօծ ֆոնի վրա, բյուզանդական քարձրաստիճան գինվորական տարազով, լուսապսակով: Երկրորդ աշխատանքը «Գահակալ Աստվածամայրն է» կրծքի մոտ երեխային բոնած: Աստվածամորը քազաղոս են կապույտ և կարմիր գգեստներ ունեցուղ ճախրող հրեշտակները: Հովսեփի աշխատանքներից են «Աստվածամոր Վերափոխումը» (1645), «Հրեշտակապետ Միրայելը» (1653), «Աստվածամոր Փառքը» (1667), «Սր. Պետրոս և Սր. Պողոս առաքյալները», «Աստվածամայրը ճանկան հետ», «Ծնունդ», «Սկրտություն», «Աստվածամոր Ննջումը», «Սր. Սիմոնը» և այլն: Իրենց գունային հորինվածքով և կերպարների մեկնարանումներով նոյնապես Հովսեփի աշխատանքներից կարելի է համարել նաև «Զարեհյան գանձատան» հունական համարվող երկու սրբապատկերները:

Հովսեփը հանդիսացավ Հալեպի սրբանկարչական դպրոցի հիմնադիրը: Նա քաջածանոթ էր բյուզանդական սրբապատկերներին, որոնք և դարձան նրա արվեստի հիմքը: Նա չստեղծեց նոր հորինվածքներ, այլ կրկնեց բյուզանդահունական սրբապատկերները, ունենալով սեփական գեղանկարչական մոտեցում, որի շնորհիվ դրսեորեց անհատական որոշակի ունակություններ: Իր աշխատասիրության, գիտական մտածողության և արվեստի ներքին զգացողության շնորհիվ Հովսեփը կարողացավ ձեռք բերել մեծ համարում և դատապահություն նկարչական մի քանի սերնդի հիմնադիրը:

Հովսեփի առաջին շնորհալի աշակերտը որդին էր՝ Նիմաքուլլան, որը միայն նկարչությամբ է զբաղվել: Հավանաբար նախնական կրթությունը նա ստացել էր Բալեմանի վանքում (Տրիպոլի մոտ): 1677թ. նա տիրապուլուսարար էր: 1694-ից՝ քահանա, քայլու ոչ ծխական (խորի), այլ ամեր նով էր քահանայություն ընուռ մել («պաս» էր): Նրա

կյանքի ստեղծագործական 35 տարիները արտակարգ բնդմնավոր են եղել: Այսօր էլ Լիբանանի և Սիրիայի հունա-օրթոդոքս վանքերում և եկեղեցիներում առկա են Նիմաքուլահի աշխատանքները: Դրանք որոշակի ճգնում ունեն հեռանալու սրբանկարչության կանոններից և մոտենալու հաստոցային նկարչությանը:

Նիմաքուլահն ևս իր ստեղծագործական կյանքը սկսեց որպես մանրանկարիչ և ձեռագիր նկարազարդող էր: Խոսքը 1675թ. նրա նկարազարդած Ավետարանի մասին է (Քեյրուք, Արևելյան գրադարան), սակայն Նիմաքուլահի կոչումը անշուշտ սրբանկարչությունն էր: Մեզ հասած այսօրինակ առաջին աշխատանքը, Համմայի հունա-օրթոդոքս հին եկեղեցում պահպանված «Հիսուսի ծնունդը» նկարն է (1686), որի ցածում նա քողել է արաքերեն հիշատակություն. «... նկարեց իր նվազ ձեռքով, Աստծո ծառան ... Նիմաքուլահն, որդին հանգուցյալ Խորի Յուսուֆի ...»:

Բալեմանդի վանքի նշանակալից աշխատանքներից է Նիմաքուլահի «Ահեղ Դատաստան» (1694, մեծաչափ աշխատանքը 380x245): Նմանատիպ է նաև նրա կողմից կատարված «Հիսուսի ծնունդը» (110x70) ստեղծագործությունը: Այս գործերում նկատելի է, որ Նիմաքուլահն, որպես ժամանակին համընթաց արվեստագետ, փորձում է հեռանալ սրբանկարչության ավանդական ձևերից և մոտենալ իր ժամանակի եվրոպական նկարչության սկզբունքներին:

Հատկանշական է, որ 17-18-րդ դդ. առանձնակի հետաքրքրություն է առաջանում դեպի «Ահեղ Դատաստանի» թեման, որի սկզբնաղբյուրը «Հովհաննեու Հայտնությունն» է: Ըստ ավանդության, հոռմեացիներից հալածված Հովհաննես Աստվածարանը «Հայտնության» գիրքը գրեց Պատմոս կղզում: Գրքում ավետվում էր աշխարհի մոտալու վախճանը՝ «հակաքրիստոսի թագավորության» հաստատումը: Նախատիպը կար իին

Եզիպտոսում «Օսիրիսի Դատաստանը»: 12-16-րդ դդ. թեման հատկապես հետաքրքրեց Եվրոպական և ոռու նկարիչներին: Հիշենք Նովգորոդի Ներեղիցայի վանքի որմնանկարը (1199), Ֆրա Անջելիկոյի (1400-1455, Բեռլինի թանգարան), Վաճ դեր Վեյդենի (1394/00-1464, Բոնի թանգարան), Բեռնար վաճ Օոլեի (մոտ 1488-1541, Անտվերպենի թանգարան), Լուկա վաճ Լեյդենցու (մոտ 1489-1533, Լեյդենի թանգարան), Ֆրանս Ֆլիրիսի (1516-կամ 1520-1570) Վիենայի թանգարանի Ահեղ դատաստանները և, վերջապես Միքելանջելոյի (1475-1564) աշխարհահոչակ որմնանկարը Վատիկանի Սիբատինյան կապելլայի պատին (1536-1541) և այլն: Վերոհիշյալ բոլոր արվեստագետները հանդես են գալիս տվյալ թեմայի նկատմամբ իրենց անհատական մոտեցմամբ:

Այս թեման որոշակի գեղարվեստական կերպարավորում է ստացել նաև միջնադարյան հայ արվեստում. Տարեփ (Ժ դ.), Աղթամարի (Ժ դ.) նկեղեցիների որմնանկարները, 1262թ. Թորոս Ռուպինի նկարազարդած Ավետարանի (ԱՄՆ, Բալթինոր), 1268թ. Շույս մանրանկարչի Ավետարանի մանրանկարները (Երևան, Մատենադարան), Վասպուրականում հարդարված բազմաթիվ ձեռագրերի նկարներ Երևանի Մատենադարանից և այլն: «Ահեղ Դատաստանի» դասական դարձած սրբանկարչական հորինվածքում հիմնական և կարևոր տեղը գրավում է ձեռքերը տարածած Քրիստոսը Քառակերպ արոռին նատած (մանրանկարներում երբեմն Քրիստոսը հանդես է գալիս երկնային կառքի մեջ նատած): Թեմայի գեղանկարչական նախատիպը սկզբնավորվեց Արևելքում՝ Բյուզանդական արվեստում: Այստեղ, ինչպես նաև քրիստոնեական այլ երկրների մշակույթում (Իտալիա, Կապադովիկիա, Հայաստան, Վրաստան, Ռուսաստան և այլն) այն ձևավորվեց 10-րդ դարում և ժամանակի ընթացքում դարձավ կանոնիկ:

Հայ իրականության մեջ «Ահեղ Դատաստանի»

թեման պարբերաբար «վերակենդանանում էր», պատմական բարդ իրականություններից թելադրված: Գրիգոր Տաթևացու (1346-1409) «Գալստյան քարոզում» կոնկրետանում են Դատաստանի հետ կապված որոշակի երևույթներ:

Գրիգոր Տաթևացին իր «Գիրք քարոզութեան», որ կոչի Ամառան հատոր» (Կ.Պոլիս, 1741, էջ 629, 737), այն միտքն է հայտնում, որ կզա Նա և կտանի արդարներին, իսկ չարերը՝ մատնիշներն ու մյուս մեղավորները կտանջվեն դժոխքի մքության մեջ: Այդ տեղի կունենա Արևելքի և Արևմուտքի մեջտեղով. Հովասափարի ծորում՝ Զիթենյաց լեռան մոտ, գիշերով, այնտեղ, որտեղ Սողոմոն քազմվորը կառուցեց իր նշանավոր տաճարը և խաչվեց Քրիստոսը: Չորի անոնք՝ Հովասափար, նշանակում է Դատաստան, Արդարություն:

Հայ արվեստում «Ահեղ Դատաստանի» թեման բազմաբնույթ մեկնարանումներ ստացավ հատկապես 17-18-րդ դր.՝ հայ ժողովրդի համար ծանր ժամանակներում: Ահեղ Դատաստանի թեմային անդրադառնալը այդ ժամանակաշրջանում, նրա ներմուծումը եկեղեցիների հարդարանքում, մարմնավորում էր Հակարքիստոսից (Նեռ) ազատվելու գաղափարը (հիշենք, որ թեման սկզբնավորվեց որպես Հռոմեական կայսրության տիրակալությունից ազատագրվելու հույսի արտահայտություն): Հայ նկարիչների ստեղծագործությունների համար հիմք հանդիսացան զերմանացի նշանավոր նկարիչ Ալբեյսու Դյուրերի (1471-1528) փայտափորագրությամբ արված «Ապոկալիպսիսի» 15 մեծադիր թերթերը (1498): Այս աշխատանքները հրատարակվեցին 1511թ. և արտակարգ ազդեցություն ունեցան թեմայի հետագա մեկնարանումների համար: Հայ իրականության մեջ լավագույն օրինակներից են Ղազար Բաբերդցու նկարագրադած «Աստվածաշունչը» (1619, Լվով: Երևան, Մատենադարան): Սա նոյն Ղազար Բաբերդցին է, որը Հայեպում նկարագրել է ձեռագրեր ու տուփեր պատրաստել, Նոր Զուղայում ստեղծված երեք Աստվածաշնչերը (1649-1660, Երերն էլ Երևան,

Մատենադարան): Թեման այնքան հիմնավոր է մուտք գործում հայկական արվեստ, որ նոյնիսկ 1666թ. Ամստերդամում տպագրված առաջին հայերեն Աստվածաշնչում Ոսկան Երևանցին օգտագործում է Ա.Դյուքերի վերոհիշյալ աշխատանքի վերատպությունները: Ստեղծագործական տարբեր սկզբունքներով արված «Անեղ Դատաստանի» պատկերումներ պահպանվել են Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի սր. Հովսեփ Հարենաթացու եկեղեցում (1655-1669), սր. Մինաս եկեղեցում, Կ.Պոլսի սր. Հրեշտակապետաց եկեղեցում (1758), Անանուրիի (Վրաստան) հայկական եկեղեցում (1678-ից հետո), եղել է Էջմիածնի Մայր տաճարում, Եվերիկի սր. Թորոս եկեղեցում, Մշո սր. Կարապետի վանքում, Ջմյունիայի մոտ գտնվող սր. Ստեփանոս եկեղեցում (1750-ական թթ., 1922թ. այրվել է մեծ հրդեհի ժամանակ), Ուռիայի եկեղեցիներից մեկում և այլուր: Մոսկվայի Կրեմլի Խաչելության եկեղեցու համար «Անեղ Դատաստանի» ընտիր նկար է ստեղծել (1679) Նոր Ջուղայից Մոսկվա իրավիրված տաղանդավոր նկարիչ Բոգդան Սալբանովը (?-1703), համահեղինակ ունենալով շնորհալի արվեստագետ Իվան Բեզմինին (?-1696?): Պահպանված նկարներից անհրաժեշտ է հիշատակել Երուաղեմի սր. Հակոբյանց վանքի օրինակը (1723), որի հեղինակը՝ տիրացու Հովհաննեսը տեսարանը ներկայացնում է մասնատված, հատվածքաբար: Սր. Քառասուն մանկունք եկեղեցում «Անեղ Դատաստան» նկարը, ինչպես տեսնում ենք, բացառություն չէ հայ իրականության մեջ: Այս աշխատանքը հիմնականում կանոնիկ լուծում ունի, որտեղ գործողությունները պատկերված են դեպի վեր զնացող հավասար շարքերով և ավարտվում են կտավի վերին սլաքաձև հատվածում: Գահակալ Քրիստոսի երկու կողմերում կանգնած Աստվածամայրն ու Հովհաննես Սկրտիչը ներկայացնում են Հոգեգալուստը: Տեսարանի առանձին մանրամասների գեղանկարչական շեշտադրումները, մի փոքր արևելյան դեկորատիվ նրբագեղությանը բնորոշ թերև երանգ ունեցող

կերպարները արված են դիմանկարչական անհատականության թերեւ շեշտադրումներով: Գահակալ չորս բազավորները տեղադրված են ամպերից կազմված շրջանակների մեջ: Քրիստոսի ոտքերի տակ դրված կշեռքը՝ 16-րդ դ. մանրանկարչական արվեստի հետ ունեցած կապի վկայությունն է: Կոմպոզիցիայի կենտրոնում կարմրագգեստ փողիար հրեշտակն է, որի շուրջը տեղադրված են գերեզմաններից ելնող հոգիները, նրանց կով տվող հրեշները, ինչպես նաև արդար ծերունիները, խելոք ու հիմար կույսերը: Հատուկ իմաստավորում են ստացել Զարի և Բարու պայքարի կերպարանավորումները: Դժոխք զնացողների միանման մարմինները, դրախտ մտնողների հանդիսավոր խումբը, Հուդային իր ծնկներին պահող թևավոր դեկի (Սաքայելի) ֆանտաստիկ կերպարը ունեն արտակարգ արտահայտչականություն: Ուշագրավ է, որ մեղավորները կատարված են շատ ավելի գրաֆիկական մոտեցմամբ: Արևելյան շքեղությամբ է օժտված գեղանկարչական գողտրիկ հատվածը՝ Դրախտը. նոճիներով ու բազմագույն ծաղիկներով: Աստվածամոր կողքին կանգնած հրեշտակները, խաչափայտը ձեռքին ողջամիտ ավազակը, գահին բազմած Աքրահամը, Խանհակն ու Հակոբը, ինչպես նաև արդար հոգիներն իրենց հանդիսավորությամբ առանձնանում են ընդհանուր հորինվածքից: Մի առանձնահատկություն ևս. դեմքերի գուտ բյուզանդական գեղանկարը գուգակցվում է դեկորի արևելյան գունագեղությամբ:

Հատուկ ուշադրության է արժանի Դժոխքի պատկերումը: Բոցերի մեջ այրվող հոգիների վերևում տեղադրված են մեղքերի անվանումները, որոնք ունեն գուտ կենցաղային և արդիականացված հասկացություններ. «Վայ այնոցիկ որք ծուլանան եւ ոչ գան եկեղեցին յաւուրն կիրակէի», «կանայք որք դեղեն զերեսս իւրեանց», «արքեցողք եւ շուայտք եւ որովայ նապաշտ ...», «նախանձուր, ատեցողք, ոխակալը ու նենգաւարք»,

«հայիոյիչք զիշոցնատուք», «հպարտք մեծամիտք», «սուտ վկայողք կաշառիք», «գողք» և այլն: Նկարի հիմնական հեղինակը՝ Նիմարուլլահը, Հալեպի սր. Զառասուն մանկունք եկեղեցում «Ահեղ Դատաստանը» աննշան տարբերությամբ կրկնում է Բալեմանդի վաճքի համար 1694թ. արված իր նույնանուն աշխատանքում: Նույն եկեղեցում պահպանվել են նաև նրա վրձնին պատկանող «Սր. կույս Մարիամը», «Սր. Սիմեոն Սինեկացին» (երկուսն էլ 1698թ.) և «Քառասուն մանկունքը» (1701) նկարը, որի կրկնօրինակը նա պատրաստել էր նաև Հալեպի հայկական եկեղեցու համար: Նիմարուլլահը ստեղծել է նաև մեկ տասնյակից ավելի Աստվածամորը պատկերող նկարներ, որոնք պահպանվում են Շիր վաճքում (Լիբանան), Բալեմանդում, Նիկոլա Սուրսոկի թանգարանում (Բեյրութ) և այլուր: Պարզորոշ զգացվում է, որ դրանց արտահայտչականությունը երկարատև աշխատանքի, եվրոպական օրինակների հմտությունը պահպան և կատարյալին հասնելու ձգտման արդյունք են: Ստեղծագործողը զգում է նկարի ներքին ռիթմը և կոմպոզիցիայի կառուցման տրամաբանական մտածողության անհրաժեշտությունը:

Նիմարուլլահին օգնական էր աշխատում որդին՝ Անանիան (Հանանիան), որն իր նկարների արձանագրություններում միշտ հիշատակում է հոր և պապի անունները: Օրինակ «Հրեշտակապետ Սիքայելը» նկարի վրա (1720, Բեյրութ, Նիկոլա Սուրսոկի թանգարան). «... նկարվեց ձեռքով մահկանացու Հանանիայի, Նիմարուլլահ վանականի որդու, որդու քահանա Յուսուֆ ալ-մուսավիրի»: Նրա վրձնին է պատկանում նաև Սր. Զառասուն մանկունք եկեղեցու «ար. Գևորգ զորավարը» սրբապատկերը (136x99), որը նկարված է ընկուզենու փայտի վրա՝ լսկատվ: Կոմպոզիցիան ավանդական բնույթի է, սակայն ներկայացնում է ստեղծագործողի մտածողության այն մակարդակը, երբ արվեստագետը հեռանալով որոշ օրինաչափություններից ավելի մոտենում է հաստոցային

նկարչության ձևերին (սր. Գևորգն ավանդական նիզակի փոխարեն ձեռքին սուր ունի, իսկ վիշապը ոչ թե ձիու ոտքերի տակ է, այլ հոշոտում է ձիու զավակը): Մրանք մանրամասներ են, որոնք նկարին տալիս են շարժման ոիբրմ և դրամատիկ տրամադրություն: Պատկերը սրբանկարչության, մանրանկարչության և հաստոցային գեղանկարչության սկզբունքների գուգորդման հետաքրքիր օրինակ է:

Տոհմի չորրորդ սերնդի ներկայացուցիչը Զիրգիզն է (Կերգես-Հովսեփ կամ Զորջոս, Շրծոս), որը 18-րդ դարի երկրորդ կեսում ապրել ու ստեղծագործել է Հալեպում: Սա իր աշխատանքներում նույնպես հեռանքում է բյուզանդական արվեստի կանոնիկ ձևերից, ավելի հակում դեպի եվրոպական գեղանկարչություն՝ տուրք տալով Հալեպի տեղական ճաշակին: Այդպիսիք են նրա «Համրիչով Աստվածամայրը» (1759) և «Անաղարտ հղիություն» նկարները (1759, 1762 - Լիբանան, Բմակինի սր. Գևորգ Եկեղեցի) և այլն:

Հալեպի սր. Քառասուն մանկունք եկեղեցում ևս պահպանվել են Զիրգիզի մի քանի նկարները: Դրանցից մեկը ներկայացնում է Աստվածամորը՝ մանուկը գրկին, կողքին ունենալով Հայր Հովսեփին և Հովհաննես Սկրտչին (1720թ.): Տեղադրված լինելով եկեղեցու Ավագ խորանում, նկարը խաչկալի դեր է կատարել: Աստվածամոր պատկերի տակ արաբերեն արձանագրություն կա. «Զեռամբ Շրծի, որդի Հանանիեի»: Զիրգիզը կատարել է նաև նկարների վերանորոգումներ: «Աստվածամայրը մանկան հետ» նկարի արձանագրությունն է. «Նկարեցաւ ձեռամբ տեր մկրտչի յիշատակ որդույն Եղիային է դուռն սր. Աստվածածին եկեղեցւոյն Հալեպի: Թվին Ռ-ՃՃԲ (1663) եւ ի թվին Ռ-ՍՍ (1752) կրկին նորոգեցաւ արդեամբ մահտեսի Սասնցի Շանոին: Նկարիչ Շրծոս Հանանիա»: Այսեղ գործ ունենք մի շարք պատմական փաստերի հետ: 17-րդ դարի կեսերին Հալեպում ստեղծագործել է նկարիչ Տեր-Սկրտչի քահանան: Այնքան տպավորիչ է եղել նկարը, որ այն բարձր գնահատող

սասունցի Շանոն վերանորոգել է տվել տեղի հմուտ նկարչին: Ինչպես տեսնում ենք, Հալեպի գեղանկարչական կյանքի գարգացումը կապված է նաև հայազգի տաղանդավոր մուսավիրների շորս սերնդի հետ, որոնց ստեղծագործությունները այսօր ել արևելագետ-գիտնականների ուսումնասիրությունների համար անսպառ նյութ են հանդիսանում (Ա.Գրաբար, Վ.Զանդե, Զ.Լեռոյ, Զ.Նասրոլլահ, Ֆ.Ռ.Հաղդադ, Ս.Աճենյան): Այնքան մեծ է մելքիթ արվեստի նկատմամբ ունեցած հետաքրքրությունը, որ Բեյրութում ստեղծվել է առանձին քանգարան, նրա հիմնադիր Ն.Ի.Սուլառկի անունով:

17-18-րդ դդ. Հալեպի նկարիչների համբավն այնքան մեծ էր, որ նկարչական արվեստի մեջ հմտանալու նպատակով, տարբեր վայրերից, այստեղ էին զալիս շնորհալի պատանիներ: Այդ մասին է վկայում նաև մի գրավոր հիշատակություն, որ վերաբերվում է Նոր Ջուղայեցի Սինախն: Ահա թե ինչ է գրում Առաքել Դավրիժեցին իր «Պատմության» մեջ. «Այս վարպետը Սինաս ստացավ իր արուեստ պատկերահանութեան և ծաղկարարութեան, քանզի ի տես տղայութեան իւրոյ ի պատճառէ իմեքէ եղև սմին զնալ ի քաղաքն Բէրիայ, որ է Հալապ և անդ եգիտ զայր ոմն պատկերահան վարդապետ, որ էր ազգաւ Ֆռանկ, աշակերտեաւ Ֆռանկ վարպետին և ուսաւ ի նմանէ: Եւ ետ ուսանելոյն ինքնագլուխ եղև. և եկեալ ի քաղաքն Սպահան»: Սա այն Սինաս նկարիչն է, որ նկարազարդել է Նոր Ջուղայի եկեղեցիներն ու մեծահարուստների ապարանքները: Նա մանրանկարիչ էր, որմնանկարիչ, հաստոցային նկարների վարպետ: Սիածամանակ, Սինասը հմուտ քնանկարիչ էր, դիմանկարիչ, նատյուրմորտիստ, քաջատեղյակ քժշկության ու դեղագործությանը: Գուցե և Սինասը նոյնպես սովորել է Հովսեսի Սուսավիրի ուսուցիչ պատրիարք Մալանքիոս Կարմենի մոտ: Հավանաբար սրան է Դավրիժեցին «Փռանկ» և «վարդապետ» անվանում, քանի որ «Փռանկ» անվանվում

Էր ոչ լուսավորչական քրիստոնյան:

Հալեպի հայկական համայնքի հարստությունը կազմող բազմաթիվ նկարներ ժամանակի ընթացքում վճարվել էին, ներկաբափել և կամ անփույթ կարկատվել էին: 1993-1994թ., Բերիո թեմի Առաջնորդարանի նախաձեռնությամբ, վերանորոգման գործը հանձնարարվեց Եջմիածնի վանքի նկարիչ Անդրանիկ Անտոնյանին:

19-րդ դ. Վերջը և 20-րդ դ. սկիզբը անբարենպաստ էր Հալեպի համար: Քաղաքական բարդ իրադարձությունները կասեցրին տեղի արվեստի զարգացումը: Ավանդների վրա հենված, բույլ ծխում էին արհեստավորական կենտրոնները: Սակայն Հալեպի արվեստը չի կարելի դիտարկել որպես մեկուսացած երևոյթ: Այն համալրում են Դամասկոսում, Քեսապում, Լաթաքիայում, Ղամիշլիում և Սիրիայի այլ վայրերում պահպանված արժեքները:

Համմայի մոտ գտնվող Փարահ ավերակ գյուղի մոտ, 1910թ. հայտնաբերվեցին 32 արծարյա իրեր, այդ թվում «Անտիոքի սկիհ» անվանումը ստացած շքեղագույն ստեղծագործությունը: Այդ իրերը Զ դարի գործեր էին և նվիրաբերված են եղել սր. Սարգիս Եկեղեցուն: 1936թ. Ղամիշլի գյուղի մոտ (Մոտովի ուղղությամբ) հայտնաբերվեց պղնձյա բուրվառ՝ տերունական սյուժեների դրվագումներով: Այդ բուրվառի նմանօրինակները նույնական սիրիական ծագում ունեն, որոնցից պահպանվում են Ֆլորենցիայում (2 հատ), Օղեսայում (2 հատ՝ Կերչից), Ս.Պետերբուրգում (Սուդակից), Նյույնբերգում (Բուլոնիայից), Բեռլինում (5 հատ՝ Եգիպտոսից, Խտալիայից ու Տրապիզոնից), Կահիրեում (Սոհակի դպտական վանքից), Լուվրում, ինչպես նաև մի քանի հատ տարրեր մասնավոր հավաքածուներում: Ուշագրավ է, որ դեռևս 1909թ. Գ.Հովսեփյանը հրապարակել է մի հոդված «Հնության նշխարհներ» խորագրով, որտեղ անվանի հայագետը նկարագրում է երկու լամպար (լամպարներ), որոնցից մեկը հայտնաբերվել էր Զրաբերդի Եղիշե առաքյալի կամ Զրվշտիկ վանքի մոտ, իսկ երկրորդը՝

Վարանդայում, իար և նման Ղամիշլիի դրվագված բուրվառներին: Հայագետը գտնում է, որ այսօրինակ լամպարները շատ տարածված էին հայկական շրջաններում: Անդրադառնալով վերոհիշյալ օրինակներին նա հիշատակում է նաև Անիում Ն.Մարի հայտնաբերածը: Այդ իրերին նվիրված ուսումնախրությունների նպատակն էր ցույց տալ Ասորիքի, ապա և Սիրիայի մշակութային արժեքների հետ հայկականի առնչությունները:

Բյուզանդական և մուսուլմանական ճարտարապետական հուշարձաններով հարուստ Դամակոսում հատկապես գրավում է Թուրքիայի հայազգի ճարտարապետ Խոջա Միմար Սինանի կառուցած Սուլեյմանի (1554) մզկիթը, այժմ՝ Զինվորական քանգարան:

Դամակոսում գրվել են մի շարք հայկական ձեռագրեր: Չմոռանանք, որ նշանավոր «Ռաբուլիի ավետարանը» (586, Ֆլորենցիա, Լավրենտինյան գրադարան), որը սիրիական ծագում ունի, նշանակալից հետք է քողել վաղ շրջանի հայկական մանրանկարչական արվեստի վրա:

Դամակոսի Բաբ-Շարի դարպասի մոտ սր. Սարգիս վանքն է, կառուցված 1867թ. (հավանաբար եղել են հայկական այլ եկեղեցիներ, որոնք խոնարհվել են պատմության բնուրություն): Սր. Սարգիս եկեղեցում պահպանվել են ծխական մի շարք իրեր, որոնցից նշանակալից են քշոցները (4 հատ, նվիրաբերված 1863թ. Վանի Սարմիտ գյուղի վարդապետ Գաբրիելի կողմից); 1878թ. անագե երկու աշտանակ է նվիրել Կարմեցի Հարություն Ջյուրջյանը, իսկ եպիսկոպոսական գահը՝ աղանացի Պողոս Սարգսյանը (1934): Եկեղեցում առկա են մի քանի գեղանկարչական աշխատանքներ (1874թ. ավետարանիշների պատկերով մի նկար նվիրել է Սշեցի Ավետիսի որդի դերձակ Սարգսյանը): Հետագա նկարները պետք ուշ շրջանի են և սրանց վրա պահպանվել են նվիրատուների երբեմնի բնակավայրերի անունները: 1901թ.

սրբապատկերներից մեկի վրա կարդում ենք, որ այն «զծել է Մինաս Գայանյանը»: Լավագույն գործերից են «Աստվածամայրը մանկան հետ» և 1861թ. Փարիզում տպագրված «Մայր Հայաստան» վիճագրության գեղանկարչական մի նոր տարբերակը, 1927թ. արձանագրությամբ:

Դամասկոսի հայկական գերեզմանատանն իրենց վերջին հանգրվանն են գտել տիգրանակերտցիներ, ակնեցիներ, արարկիրցիներ, տրապիզոնցիներ, Կ.Պոլսեցիներ, կեսարացիներ, խարբերդցիներ, բարերդցիներ և այլն: Շիրմաքաքերը ավանդական հայկական ծեփ են, տապանաքանչերի սկզբունքով: Սիրիայում, ամենար, կարելի է հանդիպել հայերին առնչվող բազմաթիվ կանգուն կամ կործանված արժեքների: Ամենավերջին խոշոր հուշարձանը՝ Տեր-Զորի ճարտարապետական ու քանդակագործական արվեստների զուգորդմամբ ստեղծված հուշահամալիրն է:

## ՏԵՐ - ԶՈՐ

Մեծ է հալեպահայերի հարգանքը դեպի արար ժողովուրդը, որը 1915թ. Մեծ Եղեռնի ժամանակ հովանավորեց ու կոտորածից փրկեց հազարավոր հայերի: Արաբները ևս փոխադարձ համակրանք ունեն խաղաղասեր ու աշխատասեր այսօրվա հայերի նկատմամբ:

Դեյր Էզ-Զորը, փոքր մի քաղաք Սիրիայում, որը շատ ավելի հայտնի է Տեր-Զոր անունով, գտնվում է Հալեպից դեպի հյուսիս-արևելք՝ Եփրատի աջ ափին: Տեր-Զոր շհասած, նույնական ոչ մեծ մի քաղաք կա՝ Ռաքքան, երբեմնի հունական Նիկեֆորիոնը, որը 7-րդ դարում վերակառուցեց խալիֆ ալ-Մանսուրը, և վերանվանեց՝ ալ-Ռաֆիկա:

Ռաքքայում պահպանվել են իին քաղաքի պարիսպների ու «Բաղդադի մուտքի» ավերակները: Այսօրվա Ռաքքան պահպանում է միջնադարյան արաբական քաղաքի կառուցվածքը: Քաղաքը հիմնականում հայտնի է կավագործության և խեցեգործության հմուտ վարպետներով:

Անապատի մեջ ծվարած այս քաղաքը, Մեծ Եղեռնի օրերից հիմնավոր շաղկապվել է նաև հայ ժողովրդի պատմությանը: Ռաքքայի մոտով անցավ մահվան դատապարտված հազարավոր հայ զոհերի ճանապարհը: Քայստի քմահաճույքով փրկվածներից ոմանք ապաստան գտան Ռաքքայի արաք բնակիչների տներում: Հայ մայրերը արարեներին հատկապես խնդրում էին պատսպարել իրենց երեխաներին: Խնդրում էին, իուս ունենալով փրկել սովից հյուծված նրանց մարմնի մեջ դեռևս ծխացող կյանքը (այսօր էլ այս ճանապարհի գյուղերում կարելի է տեսնել տարեց մամիկների, որոնք հայ են, սակայն արաք ընտանիքի մեծ մայր): Ռաքքայի բնակիչներից շատերը փրկեցին հայ մանուկների, փրկեցին նաև ամբողջ ընտանիքներ, որոնք ոչ միայն ապաստանեցին այդտեղ, այլև կենցաղով ծուլվեցին տեղի սովորույթներին, պահպանելով իրենց հիշողություններն ու ազգային արժանապատվությունը:

1915թ. Մեծ Եղեռնի ողբերգության վերջին օրերին ականատես Ռաքքայի բնակիչները դեռ երկար ժամանակ երիտասարդներին պատմում էին իրենց տեսածը, պատմում էին հայ ժողովրդին բաժին ընկած արհավիրքի մասին: Մանկուց այդ պատմություններին ծանոք էր նաև Իրրահիմ ալ-Խալիլը: Նա ճանաչում էր իրենց հայ հարևաններին, տեսնում, թե ինչպես նրանք նստում էին տան պատերի տակ և աչքերի մեջ անսահման մի բախիծով նայում դեպի Տեր-Չորի անապատների կողմը. այնտեղ, որտեղ իրենց հարազատների վերջին հանգրվանն էր:

Ալ-Խալիլը (ծնվ. 1944) նախնական կրթությունը ստացել է Ռաքքայում, ապա ավարտել Դամասկոսի համալսարանի արաբական գրականության բաժանմունքը:

Ժամանակի ընթացքում նա փորձ ձեռք բերեց, հասկացավ կյանքի իմաստը, տեսավ ինչ է տառապանքը: Գրել է պատմվածքներ. «Սաատուն ալ-Թալիպի որոնումը», «Քեղուինների բաղը», «Բորենիներ» ու մի քանի վեպեր, որոնք վաղուց մեծ համարում են բերել գրողին և պատվագոր տեղ գրավել ժամանակակից արարական գրականության մեջ: Ծանր լինելով հայերի կրած տառապանքներին, նա ստեղծեց մի վեպ՝ «Ալ-Հուրս» խորագրով: Վեպի վերնագիրը հեղինակը բացատրում է յուրովի, ալ-Հուրս նշանակում է շոգեկառը կամ բեռնատար մերենա: Սա բերևս ոչինչ չի ասում, սակայն դա զեղարվեստական խորիրդանիշ է, որը շաղկապվում է հայ գաղթականների հոծքազմության տեղահանմանը:

Իբրահիմ ալ-Խալիլի վեպը իրապատում - զեղարվեստական ստեղծագործություն է, որտեղ ներկայացված են հայկական ջարդերի տարբերակները, ինչպես և առանձին կերպարների ճակատագրերը (3 հայ տղաներ և հերոսը՝ Սարոն):

«Ալ-Հուրս» վեպի առանձնահատկությունը՝ մարդասիրությունն է, ուրիշի ցավին կարեկից լինելը: Վեպը արար ժողովրդի կարեկցանքի ու գրասրտության յուրովի արտահայտությունն է դեպի տառապող հայը: Հեղինակը, պատմական կոնկրետ երևույթը բարձրացնում է համամարդկայինի մակարդակի, որով և հայ-արարական մշակութային առնչությունները հարստացնում է մի նոր զեղարվեստական մեկնաբանմամբ:

Ուրքայից հետո առաջին քաղաքը՝ Տեր-Զորն է:

Հալեպից դեպի Տեր-Զոր ճանապարհին հանդիպում են ավերակ իջևանատներ, որտեղ 1915թ. դադար են առել հազարավոր հայեր: Շրջապատի ժայռերը հիշողություններ են պահել այն մայրերի ու աղջկների մասին, որոնք այստեղից իրենց նետել են Եփրատի ջրերի մեջ:

Տեր-Զորը հայոց նահատակության վերջին համգրվանն է:

«Անապատի հարս», այդպես էին անվանում Տեր-Չորին՝ Հալեպ-Թափրիզ առևտրական ճանապարհի երթեմնի խոշորագույն կենտրոնին: 17-18-րդ դդ. այս արքունական ճանապարհով անցնում էին նաև հայ վաճառականների քարավանները: Անցյալ դարի վերջին քաղաքի քրիստոնյա բնակիչների մեկ երրորդը հայ էր: 1918թ. հետո, ողջ մնացածներին որոնելու կենտրոնը Տեր-Չորն էր. Քաղաքում նույնիսկ հայկական դպրոց հիմնադրվեց: 1931թ. դեկտեմբերի 6-ին, Բերիո թեմի առաջնորդարք. Արտավազդ Սյուրմեյանը օծեց սր. Հոփիսիմե նորակառույց եկեղեցին: 1936-ին այստեղ բացվեց նահատակների ոսկորներն ամփոփող փոքրիկ հուշարձան: «Մարտիրոսած քաղաք», «Նահատակաց եկեղեցի» անվանումները կապվեցին Տեր-Չորի և տեղի հայոց եկեղեցու անվան հետ:

*Կողքից՝ Եփրատն է հոսում...  
Եփրատ էր կոչվում  
Եվ ... Մուրադ ասվեց:  
Զիանդամի զյոռ, թռող կոչվեր Մուրադ,  
Սիայն թե զետը գետություն աներ՝  
Գերաններ տաներ, կոճղեր ափ հաներ,  
Եվ ոչ թե զանգեր, ուսեր ու թիակ,  
Սիայն թե զետը գետություն աներ  
Գեղուկը քաներ,  
Տնկեր ու ցաներ  
Գետն էլ իր ջրով մեկը տասմ աներ*

(Պարույր Սևակ)

Այսօր Եփրատը խաղաղ է, հանգիստ ու գուլալ: Զարմանում ես, որ բնության այս զեղեցկությունը կարող էր մեղասակից լինել մի ամբողջ ժողովրդի բնաջնջմանը:

1915թ. դեպքերից հետո, արաք բնակիչներին թվում էր, թե աշխարհում հայ չի մնացել, իսկ մնացածը միայն

Ուարքայի ու Տեր-Զորի բնակիչներն են: Նրանք զարմացած էին, որ 1965-ին, Մեծ եղեռնի 50-ամյակին, մի քանի հազար հայ եկավ Տեր-Զոր՝ նախնիների հիշատակը հարգելու: Առավել ևս զարմացան, եթե 1991թ. մայիսի 5-ին, աշխարհի տարբեր երկրներից Տեր-Զոր եկան 100 հազարից ավելի հայեր՝ տեղում նահատակների նոր հուշարձանը բացելու նպատակով: Օծումը կատարեց Մեծի Տաճն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն: Ընթերցվեց Ն.Ս.Օ. S.S. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի օրինության կոնդակը:

Նոր հուշահամալիրը Տեր-Զոր քաղաքի կենտրոնում է:

Բակում տեղադրված են տարբեր երևույթներ խորհրդանշող հորինվածքներ. «Խաչելության պատ», «Անհայտ զինվորի հուշարձան» (անմար կրակով), «Քարեկամության պատ»՝ հայ և արմաք ժողովուրդների բարեկամությունը խորհրդանշող, քանդակագրություններով, աշխարհի տարբեր ծայրերում դրված Մեծ եղեռնի հուշարձանների մասրակերտ բարձրաքանդակ սալիկներով (Անքիլիան, Էջմիածին, Երևան, Պիքվայ, Մոնտերելլո): Եվ վերջապես եկեղեցի-հուշարձանը:

Եկեղեցու ներսում երկու կողմից ոլորապտույտ աստիճանները տանում են դեպի ցած՝ «Եղեռնի սրահը», որի պատերին ամրացված են մոմեր վառելու համար մարմարյա հատուկ սեղաններ, վերևում ունենալով ավետարանական խորհուրդներով արձանագրություններ: Հաջորդ ցուցարահը «Հիշատակի սրահն» է, որտեղ յուրաքանչյուր այցելու կարող է ծանոթանալ երեսնի ողբերգությանը (ուսումնասիրություններ, զրական երկեր, Մեծ եղեռնը կազմակերպած բուրք իշխանավորների զաղտնի իրամանազրեր ...):

«Եղեռնի սրահի» կենտրոնում՝ «Վերակենդանացման սյունն» է, խաչով պատկած: Այն իր շուրջն է համախմբում առաջին և վերջին հարկի սրահների հորինվածքները: Հուշասյան հիմքում, ապակեսյատ ութ փեղկերի մեջ, ավագի

Վրա ամփոփված են Տեր-Չորի անապատներից տեղափոխված նահատակների ուկորները (այդպիսի նշխարներ կան նաև Անքիլիասի Սեծի Տաճան Կիլիկիո կաթողիկոսարանի բակում կառուցված մատուռում): Տեր-Չորի համալիրում կսկզբան մի մանրամասն կա, մանրամասն, որն անմոռանալի է յուրաքանչյուր դիտողի համար. փոքր մանկան, կյանք չտեսած անմեղ նահատակի գանգի ճակատային մասը:

Ես եկել եի, որ այստեղ լսեմ,  
Ես եկել եի, որ չորեմ ծնկի,  
Քարանամ այստեղ առանց արցունքի,  
Այս, ուկորմերը ...  
*Տեր-Չորի քամին*  
Մանկան ուկորից սրինգ էր սարքել  
Եվ արշալուսի խաղաղության մեջ  
Սուլում էր մահվան անմահ նվազներ:  
Սրինգ էր սուլում  
Ու տեսիլները կախում լազուրում:

(Վահագն Դավթյան)

Տեր-Չորի Սեծ եղեռնի հուշարձանի տպափորությունը մեծ է ոչ միայն իր ողբերգական բովանդակությամբ: Սեծ է նաև ճարտարապետական կերպարավորման առումով: Հուշարձանի հեղինակը՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժնի շրջանավարտ Սարգիս Պալմանուկյանը, շնորհաշատ մի անձնավորություն, կարողացել է գտնել հուշարձանի մտահղացման գաղափարա-գեղարվեստական ներդաշնակությունը: Հեղինակը զգում է յուրաքանչյուր հատվածի կարևորությունը ճարտարապետական ողջ համակարգում: Այստեղ առկա է միջնադարյան հայկական ճարտարապետության շունչը, դեկորատիվ

քանդակագործության ժառանգության ստեղծագործական վերապրումը, որին յուրահատուկ երանգ է տալիս արարական զարդաքանդակը:

«Սրբոց նահատակաց» եկեղեցին և նրան միաձուլված հուշարձանը կառուցվել է բազմարիվ նվիրյալների՝ երկրաչափի, քարագործ վարպետների, ընտիր որմնադիրների մտքի ու ձեռքի հմտության շնորհիվ: Գործին օժանդակել են բազմարիվ ազգայիններ ու նվիրատուններ:

Տեր-Զորից ճանապարհն անապատի միջով ձգվում է Հալեպ: Անցնում է սրբացած անապատի միջով, որտեղ ավազների տակ դեռ չեն ամփոփվել հայ նահատակների բոլոր ոսկորները: Քամին մաքրում է նրանցով լեցուն այրերը, արևերես հանելով անմեղների գանգերը ...: Հորիզոնում կախված մայր մտնող արևի կարմրաշագանակագույն մեծ սկավառակը թվում է նահատակների հոգիներին նվիրված հուշարձան է, պայքարով ու հույսով լցված հայոց ապագայի խորհրդանիշ:

Տեր-Զոր ...

Հավերժության մեջ հայ ժողովրդի պատմությանը շաղկապված մի անուն:

Հալեպի հայ գաղթավայրը հիշում է, ստեղծագործում է, արարում է, իր մեծագույն նապատը բերելով նաև ազգային արվեստի զարգացմանը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հալեպի մեծահարուստների տներից պահպանվել է երևանցի բասմաճի Աբրահամ Վարդանյանի առանձնատունը (1788); որի բոլոր պատերի վրա տան տերը, պատվիրել է փորագրել բանաստեղծական տողեր (տունն այժմ պատկանում է արևելյան արվեստի կողեկցիոներ Զորջ Անթաքիի ընտանիքին):

2. Լուկիանոս զորավարի անվան հետ է կապված 319թ. առաջ, Սեբաստիայի մոտ տեղի ունեցած 40 զինվորների քրիստոնեությունն ընդունելն ու նահատակվելը: Քառասուն մանկանց (զինվորների) եկեղեցիներ կային Սեբաստիայում, Մարաշում, Բեյրութում: Ուշագրավ է, որ Հալեպի բերդի դրաներից մեկը կոչվում է «Բար Էլ-Արազային»՝ Քառասունից Դուռ:

3. 1991թ. մայիսի 7-ին Բերիոն քեմի առաջնորդարանին կից բացվեց «Զարենիան զանձատունը»:

4. 1915թ. ընտանիքը գաղթեց Քուինս (ԱՄՆ):

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին: Եր., 1965:
2. Արաբացի մատենագրերը Հայաստանի մասին: Վիեննա, 1919:
3. *Առաքել Դավթիժեցի.* Գիրք Պատմութեանց: Եր., 1990:
4. *Հովհաննիսյան Ն.Հ..* Հայոց ցեղասպանության պատճառների լուսաբանությունը և գնահատականը արաբական քժամանակակից պատմագրության մեջ: Եր., 1996:
5. *Հովսեփյան Գարեգին.* Հայ-արաբական բժշկական և մշակութային խնդիրներ: Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության: Հ. Բ., Եր., 1987, էջ 323-335:
6. *Ղազարյան Մամյա.* Հայկական գորգ. [Ֆինլանդիա], 1988 (հայ., անգլ.):
7. *Ղազարյան Մամյա.* Հայ կերպարվեստը 17-18-րդ դարերում: Գեղանկարչություն: Եր., 1974:
8. *Ղազարյան Մամյա.* Փայտի գեղարվեստական փորագրությունը Հայաստանում: Եր., 1989:
9. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ: Արաբական երկրներ: Հ.III, Եր., 1967; Հ.VI, Եր., 1974; Հ.IX, Եր., 1978:
10. *Նաուվիտոս Էղիիրի.* Հալեպի սրբապատկերների դպրոցի արվեստագետների չորս սերունդը (17-18-րդ դդ.) Մուսավիրների տոհմը: Գիտաժողովի առանձնատիպ. (արար.):
11. *Սյուրմեյան Արտավազդ.* Պատմություն Հալեպի Հայոց: Հհ. 1-3, Փարիզ, 1940-50:
12. *Սյուրմեյան Արտավազդ.* Պատմություն Հալեպի ազգային գերեզմանատանց և արձանագիր հայերեն տապանաքարերու: Հալեպ, 1935:

13. *Սյուրմեյան Արտավագդ.* Ցուցակ հայերեն ձեռագրսձ Հալեպի Ս. Զատասուն Մանկունք Եկեղեցվու և մասնավորաց: Հալեպ, 1935:
14. *Ստեփանմայան Աշոտ.* Նոր Զուղայի արհեստները. Մերձավոր և Սիօն Արևելքի երկրներ և ժողովուրդներ: Եր., 1989, հ. XV, էջ 253-267
15. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Եր., 1961; Արարական աղբյուրներ: Եր., 1981:
16. *Ադամ Մեց.* Мусульманский Ренессанс. М., 1973.
17. *Ковалевский А.П..* Книга Ахмеда Ибн-Фадлана и его путешествие в 921-922 гг. Харьков, 1956.
18. *Манандян Я.А..* О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры - XV в. н. эры). Ер., 1954.
19. *Марко Поло.* "Книга" Марко Поло. М., 1955.
20. *Оганесян Н.Օ.* Образование независимой Сирийской республики. М., 1968.
21. *Icones Melkites.* Musee Nicolas Sursock. Beyrouth, 1969 (կատալոգ և հոդվածներ).
22. *Kazarian Mania.* Le Jugement dernier comme un des sujets des arts Plastiques armeniens des XII<sup>e</sup>-XVIII siecles. Yerevan, 1978.

Գրքի հրատարակությունը՝  
Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՖ

Printed by

INSTITUTE OF ORIENTAL STUDIES  
NATIONAL ACADEMY OF SCIENCES REPUBLIC OF ARMENIA

Հրատարակության գործին օժանդակող. ՀՀ  
ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
փոխտնօրեն, պատմական գիտությունների  
թեկնածու ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

Տեքստի համակարգչային հավաքը. ՀՀ ԳԱԱ  
Արևելագիտության ինստիտուտի աշխատակից  
ՎԱՐԴԱԵՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

TH  
2-15

h2.